



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

20.424

329.14

n-34

15 JAN 2010

107 329.14

П-34

05 FEB 2010

# ՈՃՐԱԳՈՐԾ ԳԱԻԱՃԱՆՆԵՐԸ



ՅԱԻԵԼՈՒԱԾ  
1903 ՅՈՒԼԻՍԻ ԹԻԻ 5  
„ՀՆՉԱԿ“ ԻՆ

ԿԵ Գրադատի կոլեկցիա

329.14 Բ

Ո-34

Յ. Ստեփանյան  
Արմավիր

**ՈՃՐԱԳՈՐԾ**

**ԳԱԻԱՃԱՆՆԵՐԸ**

ՅԱԻԵԼՈՒԱՆ

1903 ՅՈՒԼԻՍԻ ԹԻՒ 5

„ՀՆՉԱԿ“ ԻՆ

~~107~~

16 JUL 2013

20929

Մօտաւորապէս տարի մը առաջ, Հնչ. հին եւ նոր հատ-  
ուածներու միութիւնը կ'աւետէինք Ազգին, Այդ իրո-  
ղութիւնը ամենամեծ խանդավառութեամբ ընդունուեցաւ  
հայ ժողովրդին բոլոր դասակարգերէն: Այդ միութիւնը՝ որ  
իրականացաւ վերակազմեալ Հնչակեաններու նախաձեռ-  
նութեամբն ու ջանքերովը եւ որ ամբողջ ազգը յեղափո-  
փութեան գործին լծելու ա' յնքան ցանկալի մեր բաղձան-  
քը արդէն իսկ իրագործուելու մօտեցած ցոյց կուտար, քիչ  
յետոյ այդ միութիւնը իր դէմ սարքուած դատաւ հրէշային  
դաւ մը, հին հատուածին պատկանող քանի մը անհատնե-  
րու կողմէն, որոնք իրենց նենգաւոր, անխիղճ եւ շնական  
վարմունքով դաւաճան հանդիսացան հանդէպ Հնչ. կուսակ-  
ցութեան եւ հանդէպ բովանդակ յեղափոխ. գործին:

Համբարձում Արզումանեանց, Սազունի Սաղաթէլ եւ  
Սիմոն Հովեանց կամ Ս. Տաշերեան՝ որ մեքենայողներն եղան  
այդ անօրինակ դաւին, հրապարակը ողողեցին՝ միութեան  
իրականացման համար ամենէն աւելի ջանք թափող քանի  
մը Հնչակեան գործիչներու զկմ յերկրբուած ամենայնա-  
րական զրպարտութիւններով:

Մենք՝ խորապէս խոցուած այս ահաւոր յուսախարու-  
թենէն, մեր Հնչակեանի եւ Հայու արժանապատուութեանը  
մէջ վիրաւորուած՝ տեսնելով որ այս աստիճան ճիւղային  
անասօթ թեան կարող կ'ըլլային Հնչակեան ու Հայանունը  
կը անձեր, ու միւս կողմէն չուզելով որ Հնչակեան միու-  
թեան առաջ բերած խանգավառութիւնը քայքայել ձգտող  
այդ ազգադաւ ճիւղերուն մենք իսկ անուղղակի մասնակ-  
ցութիւն մը ունեցած ըլլանք, որոշեցինք այդ ցուազին  
սքանսալին հանդէպ հրապարակային պաշտօնական բա-  
ցատրութիւն մը տալէ ետ կենսւ (հակառակ որ մեզի ա' յն-

4712-87

քան զիւրին պիտի ըլլար այդ զրպարտութեանց ողորմելի ստութիւնը ապացուցանել) և ուզեցինք որ այդ փոռը հարցը Հնչակեան շրջանակներու մէջ միայն լուծուէր ու մաքրուէր :

Ի այց նկատելով որ դաւաճանները չափ ու սահման չգրին իրենց բացարձակ ապիրատութեանը, նկատելով որ Դրօշակեան թերթերն իսկ թեւութիկունք կը հանդիսանային անոնց ամենէն անհիմն ու աղտոտ վայրահաջութիւններուն, նկատելով որ հրապարակի վրայ քաշկռտուող այդ խաղաղութիւնը Հնչակեան կուսակցութեան երդուեալ թըշնամիներուն շատ բնական հաճոյք մը պատճառելէն զատ, կրնար ճշմարտութիւնը մօտէն չգիտցող անկեղծ մտքեր ալ պղտորել և հանրային բարոյականը ծանրապէս թունաւորել. պարտք համարեցինք մասնաւոր յաւելուածով մը՝ մեր քիչ ատենէն գումարուելիք ընդհ. ժողովին հանդիւրաւոր խորանուճէն առաջ՝ ամբողջ հայ հասարակութեան առջեւ պարզել այդ սեւ հոգիներուն արարքները :

Մենք գիւրին ու տարփամ ու քմահաճ ու հակասական զրոյցներ արձակելու պէտք պիտի չունենանք. պիտի թուանք միայն ԻՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ, իրենց անհերքելի ապացոյցներովը մէկտեղ :

Ու արդէն ամբողջ Հայութեան առջեւ այդ ճիւղներուն զօրխային հոգեբանութիւնը մերկացնելու պարտքը աւելի կը շեշտուի այն պատճառաւ, երբ կը տեսնենք որ զարգային գործին հոգեւին նուիրուած գործիչներ ապուշ ճիգերէ յետոյ՝ զոր կրնայինք արհամարհել, այդ հրէշները, նուաճ հակառակորդներ այդպիսի խախտուած միջոցներով փշրելու անկարող՝ «չարաչար հալածանք պատուիրող շըրջարեականներով, անոնց զէմ սկսան զոգուել միամիտ ու անհրազեկ հոգիներ և ամբողջ ազգին յարգանքը վայելող մեր երկու թանկագին ընկերներուն — Շահէնին և Չիթ-ճեանին — սպանման զրգիչն եզան :

Այս տեսակէտն է միայն որ մեզ քաջութիւն պիտի տայ մեր վշտանքը զսպելով հասարակութեան առջեւ փրօնելու այդ հրէշներուն պժգալի հոգեբանութիւնը :

Ոչ ոք պիտի կրնայ առանց բացարձակ ճշմարտութիւնը կամովին ու չարամտօրէն խեղաթիւրած ըլլալու՝ ուրանալ այն ուղղամիտ և անշահախնդիր ճիգը՝ զոր է

գործ զրինք՝ միութեան բանակցութեանց սկիզբէն մինչև վերջը :

Ամուր, անկեղծ ու տեւական հիմերու վրայ հաստատուած ճշմարիտ միութեան մը իրականացումին ջերմեանց յոյսովը տոգորուած՝ ծայրայեղ համբերութեամբ մը հանդուրժեցինք այն երկդիմի, հակասական ու կաշկանդիչ ընթացքը, որ շարունակ ցոյց տրուեցաւ մեզ զէմ և որ պիտի կրնար առաջին օրէն ու վերջնապէս վտանգել և բացարձակապէս ապարդիւն մնալու դատապարտել համաձայնութեան ամէն վործ, եթէ երբէք՝ մեր կողմէն՝ հասկանալի իրճահարութեամբ մը՝ ամէն խոչընդոտի դիմադրել յանձնառած շըլայինք՝ պարզապէս գործը յաջողցնելու տարապայման փափաքով :

Այս անհերքելի իրողութիւնը՝ կարգ մը զուտ անձնական եպերելի մտահոգութիւններով խճբծել, խեղաթիւրել և կամ անպիտանալ կը նկրաին մարդիկ, որոնք բիրտ ու կամայական յաւակնութիւններով և անվերջ փոփոխամտութեամբ՝ աներեւակայելի զօրաբութիւններ միայն ստեղծել ուզած են միշտ :

Ու այդ սիւնոյն մարդիկն են որ երեսն ու բերանը կ'ունենան ըսելու, և հրապարակաւ իսկ գրելու, սա տեսակ դերասանական խօսքեր :

« Ո՞ւմ յայտնի չէ այն խանդավառ ոգեւորութիւնը, որով մենք ձեռք էինք պարզում մեր կուսակցական նախկին վեր. հերձուածին (°) »

Ո՞ւմ յայտնի չէ :  
Նպատակ չունինք հոս մի առ մի թուել այդ պարոններուն կողմէն անընդհատ ու գիտակցբար յարուցուած բոլոր արգելքները. ոչ ալ կ'ուզենք մանրամասնօրէն ծանրանալ երկու կողմերու իւրաքանչիւրին հետեւած ուղղութեան և բռնած դիրքին վրայ, ուր ոչ ոք պիտի կրնայ մեզի ամենազոյգն չկամութեան մեղադրանքը, կասկածն իսկ, վերագրել :

Իրողութիւններուն գառնանք հիմա :

Ա.

Հնչակեան միութեան բանակցութիւնները՝ 1901ի սեպտեմբերին սկսուած՝ 1902 մարտ ամսոյն հաղել վերջացան : Ու այս արտակարգ երկարաձգման միակ պատճառը

նախկին հին հատուածի կողմէն բանակցողներուն անվըճ-  
աւկան, երկրորդի ու յարափոփոխ ընթացքն եղաւ :

Նախապէս հին հատուածին «կեդրոնը»՝ ըր երկու անգամ  
ներէն մէկուն միջոցաւ միութեան բանակցութիւնը չորս  
ամիս քաշկուտելէն՝ եւ խնդիրը հազարումէկ ձեւափոխու-  
թեան ենթ սրկելէն վերջ, յայտարարեց թէ՛

Կատարուած բանակցութիւնները չեղեալ պէտք է հա-  
մարուին եւ թէ իրենց պատգամաւորական ժողովն է որ  
պաշտօնապէս եւ ուղղակի պիտի սկսի բանակցիլ մեզ հետ :

Հին հատուածի կեդրոնին այս նսնանջն ու դրժումը  
բնականաբար շատ հեռու էր մեզ սրտապնդում մը տալէ :  
Բայց ուղեցինք մինչեւ ծայրը տանիլ գործը :

1902 յունուար 10ին, հին հատուածի պատգամ ժողովին  
հետ սկսանք մեր պաշտօնական նոր բանակցութիւնները :

Երկար վիճաբանութիւններէ վերջ, հին հատուածի  
կեդրոնին ու մեր միջեւ կանխաւ մշակուած եւ ընդուն-  
ուած գրեթէ բոլոր պայմանները կրկին ընդունուեցան :

Երկու կողմէն վերջնականապէս համաձայնութիւն գո-  
յացաւ միութիւնն իրագործել՝ տարաբնութօրէն հայ յեղա-  
փոխական գործին շուրջ :

Երկու կողմէն մասնաւորապէս ընդունուեցաւ թէ պէտք  
է socialismը մէկդի թողուլ եւ թէ՛

« Կուսակցական պաշտօնական սրկանը պիտի զբաղի  
զուտ հայ յեղափոխական եւ ապստամբական հարցերով » :

Կը մնար միայն «Հնչակ»ի պարագան, որ մինչեւ այդ  
օրը Աւետիս Կարաբէկեանի անձնական սեփականութիւնն  
էր : Ու մենք պահանջեցինք որ «Հնչակ»ը միացեալ Հնչակ-  
եան կուսակցութեան անձեռնմխելի սեփականութիւնը  
զառնայ՝ կտաւարութեան օրէնքով : Պատգամ ժողովը  
խոստացաւ օրինական ամէն ապահովութիւն տալ այդ մա-  
սին :

Գործին այս բացայայտ ու վերջնական լուծումին հա-  
սած վիճակին մէջ, կը սպասէինք միայն որ հին Հնչակեան-  
ներու պատգամ ժողովը ընդունուած որոշման համաձայն,  
իր խոստումը գործադրէր :

Դարձեալ յուսախարութիւն :

Այս համաձայնութեան 10 օր վերջ, 1902 յունուար 20ին,  
հին հատուածի պատգամաւորներէն մէկը, հետեւ՝ ի թելա-  
դրական երկտողը կը զրկէր մեզի :

« Յարգելի ընկեր :

« Օրը նոր դժուարութիւնը նոր չենք կրնար սպասել :  
« մէկ ժամ առաջ սա միութեան խնդիրը կարգադրենք, եւ  
« եթէ մէկ երկու օր ալ ուշանայ, նոր դժուարութիւններ  
« ալ պիտի ելլեն » :

Ողջուններ

Ի դիմաց Ա. Մերիկայի ընկերներին

Յ. Յ. Բարեպաշտ

Այս նամակը առեղծուածի մը պէս թուեցաւ մեզի :  
« Միութեան խնդիրը կարգադրենք » . բայց չէ՞ որ տասն  
օր առաջ ամէն ինչ կարգադրուած վերջացած էր արդէն եւ  
միութիւնը կատարուած պիտի հռչակէինք, եթէ « Հնչակ »  
կուսակցութեան սեփականութիւնը դարձնելու իրենց խոս-  
տումն յարգէին շուտով :

Գաղտնիքը երկար չտեսց սակայն : Նոյն օրը, հինհա-  
տուածի երկու լիազօրները, պ. պ. Հրաչեայ եւ Կարապետ  
Մարտիկեան՝ յայտարարեցին մեզ, թէ պատգամաւորական  
ժողովը ետ կ'առնէ իր որոշումները եւ չպիտի կրնայ ո՛չ  
թր ծանօթ խոստումը գործադրել, ո՛չ ալ՝ հետեւապէս՝ միու-  
թիւնը կատարուած հռչակել . որովհետեւ՝

Կովկասէն նոր պասզաւաւորներ եկած են՝ որոնք միու-  
թեան գլխաւոր պայքարողները կը վերծեն եւ կը սպասուան ևնչի  
իսկ նոր հերձուած առաջ բերել՝ երբ ևնչնըքեալք եւ ան-  
պայքան չ'ընդունուի հին Հնչակեան ծրագիրը՝ socialismով  
մեկիտել :

Երկրորդ պաշտօնական դրժումն էր այս : Երկու յիւ-  
զօրները, անգամ մըն ալ ետ կ'առնէին իրենց խոստումներն  
ու յանձնառութիւնները, եւ հիմա՝ բացէ ի բաց կը յայտա-  
րարէին, թէ առանց socialismի՝ կարելի չէ միանալ : Հոս  
զանց կ'ընենք նշանակել, մեզի եւս ընդունիլ աալու մասին  
իբր պարտաւորիչ տարր  
իրենց ծիծաղելի ստիպումները ու աւելի քան ծիծաղելի  
սպանալիքները, որոնցմով կը կարծէին պարտկած ըլլալ  
իրենց այս երկրորդ խոստումնազանցութիւնը :

Հին հատուածին կողմէ այս երկրորդ խոստումը ըր բոլոր  
մանրամասնութեամբ պատրաստուած էինք առանձին շրջա-  
բարակաւորով մը մեր մասնաձեւերուն հաղորդել, երբ յան-  
կարձ, յաջորդ օրը, լիազօր պ Հրաչեայի կողմէն ստացանք  
մեր լիազօրին ուղղուած հետեւալ նամակը :

21 յունուստ , 1902

Ազնիւ պարոն ,

« Վերջապէս սուսիսի դուրսիւնից յետոյ , այս գիշեր , մեր պատգամ . ընդէ . ժողովր որոշեց ընդունիլ միութեան բանակցութեան այն պայմանները , որը մեր կողմից նշանակուած լիազօր կոմիտեան մշակեց ձեր կողմից նշանակուած լիազօրին հետ : Մենք բացարձակ իրաւունք ունինք այլեւս սուսիսի դուրսիւնէն աւելի պայմանները եւ միտքիւնը յայտարարելու կայայտ : Հետեւաբար վաղը , չորեքշաբթի , կէսօրից յետոյ , ժամը երկուքէն երկուքուկէս , հաճեցէք գալ մեզ մօտ՝ 27 Nounthead Grove ուր պաշտօնապէս գործարարեան կը դնենք միտքիւնը , որը այնքան ցանկալի է դարձել բոլորի կողմից :

« Ողջոյններով՝

Հրաչեայ

Մենք որ հին Հնչակեաններու վերջին անակնկալ առարկութիւններէն եւ պաշտօնական երկրորդ զրժուէն դարձանք ու ցաւ զգացած էինք , ուրախութեամբ կարգացինք պր. Հրաչեայի այս նամակը , յետաձգեցինք մեր շրջաբերականներուն ուղարկումը եւ փութացինք նշանակուած ժամադրութեան ներկայ գտնուիլ :

Բնականաբար չէինք կրնար մեր մտքէն իսկ անցընել , թէ երրորդ զրժում մը պիտի յայտարարուի մեզ :

Հին հատուածի երեք լիազօրները եւ պատգամ . ժողովին նախագահ պր. Կարապետ Մարտիկեան՝ տխուր քաջութիւնն ունեցան սակայն յայտարարելու , թէ՛

« Կովկասէն այս անգամ ուրիշ նոր պատգամաւոր մը եւս եկած է որ նոյնպէս կը սպառնայ իր նախորդներուն հետ անջատուիլ եւ նոր ներձուած մը յառաջ բերել՝ երբ socialismը իբր միտքեան հիմնական պայման չընդունուի :

Առաջարկեցին մեզ չեղեալ նկատել մինչեւ այդ օր կատարուած բանակցութիւնները եւ՝ գէթ առերեւոյթ՝ ընդունիլ socialismը եւ իրենց ծրագիրը : Այլապէս անկարելի կը նկատէին միութիւնը .

« Մենք չենք կրնար Կովկասի պատգամաւորներուն հակառակել , որովհետեւ առանց անոնց չպիտի կրնանք այդ կողմերը մասնաճիւղ ունենալ » :

Ա՛յս էր հին հատուածի լիազօրներուն ամբողջ դատողութիւնը :

Պատասխանեցինք թէ մենք՝ իրական ու ճշմարիտ եղբայրական միութեան մը փափաքող՝ չենք կրնար սակայն խախուտ ու երկցիմի ու խարդախ համաձայնութեան մը գործակատարներն ըլլալ եւ այդպէսով նոր շրջան մը ստեղծել երկպառակութիւններու , որոնք կրնան աղետաւոր դասնայ :

Յայտարարեցինք , թէ մեզի համար անկարելի է ուրեմն մեր բանակցութիւնները շարունակել ժողովի մը հետ , որ իր որոշումներն յարգելու չափ իսկ հաստատակամութիւն չունի եւ կրնայ ամէն կարողադրութիւնէ ետ անել՝

« Կովկասէն պատգամաւոր եկաւ » ի նման դիւրին եւ ծիծաղաշարժ առարկութիւններով :

Վերջնապէս յայտարարեցինք թէ ամբողջ կացութիւնը ստիպուած ենք այլեւս պարզել մեր մասնաճիւղերուն , որոնք նոյնպէս պէտք է իրենց լճոսկան պատասխանը տան մեզի՝ որպէսզի այսպիսի ազարդիւն եւ անհանդուրժելի քաջբռնութենով ժամաւճառ չըլլանք այլեւս .

Ու շրջաբերականները ցրուեցինք՝ պարտականութիւն չըզայով մեր բոլոր ընկերները տեղեակ ու գիտակ ընել այսպիսի ծանրալիչի ու բարդ գործի մը ամբողջ ներքին հողերանութեան :

Յաջորդ օրը , հին հնչակեան պատգամաւորներէն ոմանք՝ վերջապէս , խոստովանեցան իրենց ժողովին ընթացքին ոչ սրտապնդող հանգամանքը , մեղադրեցին Կովկասեան գործիչները եւ հաստեցին թէ իրենք ու եւ ջանք չպիտի խնայեն՝ միութիւնը անկեղծօրէն իրականացնելու առաջարկութեամբ : Ու խնդրեցին որ դեռ եւս վերջացած չնկատենք բանակցութիւնները :

Իսկ չին հատուածի պատգամ . ժողովին նախագահ եւ լիազօր պր. Կարապետ Մարտիկեան՝ հետեւեալ նամակը կը գրէր .

« Հաճեցէք իմացնել թէ ձեր գրած նամակներն ու շրջաբերականները զրկեցիք , թէ ոչ , մենք թէեւ մեր բոլոր ջանքերը չենք խնայել այդ պատասխանէն առաջ գործը լրացնել , միեւնոյն ատեն թերեւս ստիպուած ըլլանք սպասել մինչեւ այդ պատասխանը .

Անկեղծ սէրս՝  
Կ. Մարտիկեան



Նոյն յանկերզը՝ « Ռուսաստանի մէջ մուտք չենք ունենար, պէտք է տեղի տալ ռուսահայ պատգամաւորներու բոլոր քմահաճոյքներուն » :

Նախագահ Մարտիրիկանի այս նամակին մեր լիազօրը ժամանակին՝ պատասխանած է հետեւեալ կերպով .

« Ստացայ ձեր 24 յունուար թուակիր երկտողը : Կ'ուզէ՞ք գիտնալ թէ նամակները եւ շրջաբերականները ղըրկեցի՞նք թէ ոչ .

« Կեզր . վարչութեան ղիւանը՝ իր բոլոր մասնաճիւղերուն եւ հեռաւոր ընկերներուն հաղորդեց մանրամասնութիւնը մեր բանակցութեանց, որոնց արդիւնքը գրեթէ բաղաբար ոչինչի յանդեցաւ .

« Պր Զրաչեայի ինձ ուղղած յունուար 21ի նամակէն վերջ, բացարձակ իրաւունք ունէի յուսալու, հաւատալու թէ ձեր պատգամ ժողովը վերջնական ու վճռական որոշումի մը յանդամ է . հետեւաբար չէի կրնար մտքէս անցնել որ գարձեալ խնդիրը պիտի փոխէք՝ ամենայն պաշարիւնութեամբ կարենալ յայտարարելով, թէ կովկասէն նոր պատգամաւոր մըն ալ հասած է . . . :

« Յուսալով որ ձեր ուշադրութեան վրիպած չէ ձեր այդ յարափոփոխ եւ անվճռական ընթացքին շատ քիչ սրտապնդող հանդամանքը, պիտի խնդրէի որ ամէն ջանք ընէք որպէսզի ձեր մէջ նախ վերջնական ու անդառնալի համաձայնութիւն մը գոյանայ եւ անկէ վերջ միայն վերակտին բանակցութիւնները, որոնք՝ այնպէս՝ ինչպէս անսանք, չպիտի կրնան բաղձացուած արդիւնքն ունենալ .

« Մեր կողմի տրամաբ. ու թիւններն ու համոզումները ծանօթ են ձեզ : Մեր կողմէն ո՛ր եւ է փոփոխութիւն, հաստութիւն կամ դժուարութիւն մինչեւ այսօր տեղի չունեցաւ եւ չպիտի ունենայ .

« Ամուր, անկեղծ եւ ուղղամիտ հիմերու վրայ հաստատուած միութեան մը փափաքողն ենք միշտ : Միութեան ծանօթ կէտերուն վրայ ձեր պատգամաւորական ժողովին միանգամ ընդ միշտ, միահամուռ համաձայնութիւն միայն կախում ունի, ուրեմն, խնդրոյն անյայտալ լուծումը .

« Զերդ . . . »

Չին հատուածի երեք պատգամաւորները՝ այս անգամ եւս յայտարարեցին մեզ թէ այդ հանապազօրեայ փոփոխութիւնը քանի մը անհատներու գործն է՝ որոնք անցեալէն ու ներկայէն անտեղեակ են եւ զորս պիտի աշխատին իրենք համոզել՝ առանց նոր հերձուածի տեղի տալու : Այնպէս ձեւացուցին մեզ, թէ դիւցազնական կռիւներ կը մղեն ռուսահայ պատգամաւորներուն դէմ, հրաշքներ կը գործեն եւ միշտ մեր տարամերժօրէն հայ յեղափոխական հայեացքներու լաղթանակին կ'ողորին : Բաց ի այս յայտարարութիւնէն, մեր ընկերներէն ոմանց ալ դրած են թէ « արիւնահեղութիւն կարելի է պատահի իրենց մէջ » , թէ իրենց պատգամ ժողովը « երկու մասի բաժնուած է եւ երկու կողմէն ղիւնալ ժողովի կ'երթան » :

Կրկնեցինք դարձեալ, թէ մենք՝ մեր բանակցութեան միջոցին՝ ո՛չ ռուսահայ ունինք մեր նկատարդութեան առջեւ, ո՛չ պարսկահայ, ո՛չ ամերիկահայ, այլ՝ չին հատուածի ժողովը, որ հաւաքաբար ու պաշտօնապէս ու գրաւոր պէտք է հաղորդէ մեզ իր « այո՛ » ն կամ « ո՛չ » ր :

Քանի մը օր վերջ, 1902 յունուար 30ին, չին հնչակեան պատգամ ժողովին քարտուղարը հետեւեալ նամակը կը գրէր մեզ .

« Միութեան պայմանագրին պաշտօնական ստորագրութիւնը կատարելու համար, կը փութանք հաղորդել ձեզ որ հաճիք վաղը, երեկոյին, ժամը 6ին, անպատճառ այնտեղ լինել : Կը ցաւինք որ այս յայտարարումը, հակառակ մեր բուռն ցանկութեան տեղի ունեցաւ . » :

Այս նամակը գրեթէ կրկնութիւնն էր պր. Զրաչեայի ծանօթ նամակին, ուր նոյնպէս յայտարարուած էր թէ՛ « սարսափելի գրութիւնից յետոյ »՝ ամէն բան վերջացած է եւ որմէն վերջ սակայն կրցան ամէն որոշում եւ յանձնառութիւն ետ առնել՝ յայտարարելով թէ՛

« Կովկասէն պատգամաւոր եկած է » . . . :  
Ուստի՝ որպէսզի միեւնոյն կատակերգութիւնը չի կաշողանան կրկնել՝ այս անգամ, չին հատուածի պատգամ ժողովին ուղղուած նամակով մը պահանջեցինք, ի միջի գոյոյ, որ գրաւոր բացատրութիւն մեզ, թէ ի՞նչ պէտք է հասկընանք մենք իրենց « ամէն բան կարգադրուած է » խօսքէն, եւ թէ՛ ի՞նչպէս վերջացած է « Հնչակ » ի սեփականատիւութեան պարագան : Պահանջեցինք նաեւ որպէսզի մեզ



Այս գոնհիկ ու նկնդաւոր խօսքերը քնականաբար չէին կրնար մեր մտածումները փոխել տալ մեզի. եւ անմիջապէս հասկցողցինք թէ երբեք ո՛ր եւ է Մարտիկեանի կամ Սաղաթիէի թոյլ չենք կրնար տալ որ յանդգնին սպառնալիքի տակ քարեցնել մեզ, թէ խախտւած եւ տնհարազատ միութեան մը գործաւորները չպիտի ըլլանք երբեք, եւ թէ՛ Ամերիկայէն գուրս ուրիշ ամէն կողմ կը դռնուին Հնչակեան շրջանակներ, որոնք նոյնպէս իրենց ձայնն ու կարծիքն ունին, Աւ վերջապէս հին հատուածի ընդհանուր ժողովին առաջարկեցինք որ իրենց վերջին խօսքը բանաձեւեն ու դրաւոր մեզ ներկայացնեն :

Ահաւասիկ միութեան բանակցութենէն քանի մը նըմուշներ միայն, որոնք բաւական են ինքնին ցոյց տալու . թէ ի՛նչ տեսակ ճամբաներէ քարեր անցեր են անո՛նք՝ որ մի միայն իրենց յատուկ գերասանութեամբ մը, չեն խպնիր բռնու եւ գրելու :

«Ո՞ւմ յայտնի չէ մեր խանդավառ ոգեւորութիւնը» . . . . .

Ո՞ւմ յայտնի չէ :

Ահա, թէ ի՛նչ կը նշանակէ խանդավառութիւն եւ ոգեւորութիւն բառը այդ մի՛ եւնոյն Մարտիկեաններու եւ Սաղաթիէի շրջանէն բերնին մէջ :

Ի՞նչ թէ ի՛նչ գեր կատարեցին երկու կողմի մասնաճիւղերն ի նպաստ միութեան՝ ատոնց մասին խօսիլ մեր նիւթէն գուրս է :

Կը կրկնենք միայն որ երկար վէճերէ եւ բազում դժուարութիւններէ վերջ, կայացաւ Հնչակեան միութիւնը՝ որոչ պայմաններու վրայ, որոնք մեր բոլոր էական պահանջներուն զոհացում կուտային եւ որոնք՝ երկու կողմէն ստորագրուած՝ կը մնան մեր մօտ :

Այս պայմաններուն հետ մէկտեղ հին Հնչակեանները համաձայնեցան նաեւ որ Աւետիս Լազարբէկեան ուղղակի՛ կամ անուղղակի՛ ո՛ր եւ է գործակցութիւն կամ յարաբերութիւն պիտի չունենայ այլ եւս երբեք Հնչ. կուսակցութեան հետ : Այս համաձայնութիւնը պաշտօնապէս արձագրուած եւ երկու կողմէն ստորագրուած ալ է ատենագրութեանց տեսարակին մէջ, որ մեր քով կը մնայ նոյնպէս :

Ի՞նչ հիմա խնդիր չէ քննել, թէ միութենէն առաջ, ու միութեան բանակցութեանց ընթացքին, ո՞վ ի՞նչ կարծիք յայտնեց է :

Մնդիրը, բո՛ւն, էակա՛ն, միա՛կ խնդիրը՝ միութենէն վերջ եղածներուն շուրջ կը դառնայ :

Ու պէտք է քննել, ճշդեւ թէ՛ Հնչակեան գիրկընդխառնումէն վերջ, ամբողջ անցեալը թա ելու ուխտով, անկեղծութեան զինակցութիւն մը երդուըննայէ վերջ, ո՞վ դրժեց, ո՞վ դաւաճանեց ընդունուած պայմաններուն եւ յանձնառութիւններուն դէմ :

Ու ահա թէ ի՛նչ բան կ'ուզենք պարզել այս յաւելուածով, իրր անխուսափելի պարտականութիւն մը :

Բ.

Միութեան իրագործումով՝ ինչպէս ըսինք արդէն, կը կարծէինք թէ վերջացած են այլ եւս հատուածական ընդդիմադիր ձգտումները, որոնք ա՛յնքան կաշկանդումներ բուսեցնեցին անցեալին մէջ : Կը կարծէինք, թէ հին հատուածի կողմէն մեզի պաշտօնակցելու կոչուած պարոնները՝ հաւատարիմ իրենց ուխտին ու յանձնառութիւններուն՝ տարրական խղճահարութիւնն ու պարկեշտութիւնը պիտի ունեան՝ ո՛ր եւ է եղբայրաբար մեքենայութեան ջլատող նեան՝ ո՛ր եւ է եղբայրաբար մեքենայութեան ջլատող մտանոգութենէն ինքզինքնին այլ եւս հետի պահելու :

Գէպէրը չուշացան սակայն ի յայտ բերել կարգ մը ծրագրուած մեքենայութիւններ, անխոտտովանելի շաշիւներ, շիւ ու միջին նկատումներ՝ որոնց համակ անձնատուր՝ մեզի հետ պաշտօնակցելու կոչուած այդ մարդիկը՝ ա՛յնքան թեթեւօրէն, անմտօրէն ձեռք առին քանդումի ոճրագործ ծրագիր մը :

Հնչակեան կուսակցութեան կեդր. վարչութեան միացումէն անմիջապէս յետոյ, երկու կողմի մարդոց մէջ ատանց գեռ եւս ո՛ր եւ է անհամաձայնութիւն՝ առանց տակաւին գաղափարի ծանր կամ թեթեւ վէճ մը իսկ պատահած ըլլալու, մեր եզակի պաշտօնակիցն ըր՝ երբ մէկ կողմէն, մեր երեսին, շարունակ, միութեան իրականացումին համար մեր կատարած ճիգին նկատմամբ գնահատումի խօսքեր կը յեղոյնէին. եւ «ԳԹի արատ»ը ջնջողներ կը հանարէին մեզ, միւս կողմէն զգուհի եւ անկարելի երկդիմութեամբ մը՝ մեր ետեւէն, իրենց տխուր յատկութիւններուն ամենամեծ մարտնչները կը շայլեն, եւ՝ հակառակ կրննափայլուն ապացոյցները կը շայլեն, եւ՝ հակառակ կրննափայլուն ապացոյցները կը շայլեն, եւ՝ հակառակ կրննափայլուն ապացոյցները կը շայլեն :

քուած պայմաններուն՝ Հնչակեան կուսակցութեան մէջ socialismը պարտաորիչ տարր դարձնելու եւ Աւետիս Նազարբէկեան մը վերստին կուսակցութեան գլուխը բերելու իրենց թաքուն ծրագրին յաջողութեան առաջին եւ գլխաւոր պայման կը նկատեն նախ եւ առաջ ամօթալի միջոցներով վարկարեկել առհասարակ բոլոր վերակազմեալ հնչակեան գործիչները :

Կեդրոնական վարչութեան բոլոր որոշումները եւ ուրիշ ամէն իրողութիւն աշխանդակօրէն խործնելով, խեղաթիւրելով կը հազորեն հոս ու հոն, եւ մասնաւորապէս Լօստօնի Հնչկ. մասնաճիւղին մէջ հին հատուածը ներկայացնող քանի մը տղոց, որոնք սկիզբէն ի վեր դաւադրութիւններուն մեղսակիցներ են եւ որոնք նո՛յն դաւադրութեան գաղտնի խրախուսուած՝ մասնաճիւղի ժողովներուն մէջ կ'որոշին զգացումներու եւ վստահութեան յեղաշրջում մը առաջ բերել եւ իրենց միացած Հնչակեանի գերազանց պարտականութիւնը կատարած ըլլալ կը համարին՝ շարունակաբար Հնչակեանները գործ տեսնել չեն ուզեր, ինչ անոնք զրամները կը մտնեն, թէ նազարբէկեանը միակ մարդըն է իր յեղափոխական եւն :

Չանց կ'ընենք, մարդկային արժանապատուութեան սիրոյն, մի առ մի թուել այն բոլոր անարգութիւնները գորս կը հնարեն այդ տղաքը՝ իբրեւ հաւատարիմ եւ կոյր գործիքները Համբարձում Արդւմանեան, Սաղաթիէ Սաղունի ու Սիմէոն Հովուեանց կոչուած դաւադիրներուն բոլոր թելադրութիւններուն եւ մեքենայութիւններուն :

Շատ շանցած՝ մասնաճիւղին մէջ երկպառակութիւն եւ յետոյ բաժանում տեղի ունեցաւ արդէն :

Հին հատուածի կողմէն մեզի գործակից նշանակուած երեք պարոններ՝ Կարապետ Մարտիկեան, Համբարձում Արզումանեան եւ Սաղաթիէ Սաղունի՝ կամաց կամաց սկսան ժողովներուն մէջ ալ ցոյց տալ իրենց թոյնը՝ ամենօրեայ անհանդուրժելի կռիւներու վայր մը դարձնելով ժողովատեղին. դարձեալ իրողութիւնները թող խօսին :

— Սաղաթիէ Սաղունի եւ Կարապետ Մարտիկեան՝ միութենէն առաջ ու վերջ, շարունակ կը կրկնէին մեզի, թէ Սաղաթիւեան անուն մարդը իրենց շարքերէն վտարուած է խաղա՛ իբրեւ վնասակար ու անկարող լինելով :

1902 Յուլիս 16ի Կեդր. վարչութեան նիստին մէջ սաւկայն, յանկարծական տարրերնակ ու գայթակղեցուցիչ խանդավառութեամբ մը սկսան խօսիլ Սաղաթիւեանի մասին, որ ընտրելի ներկայացուցին՝ իբր հնչակեան գործիչ Ամերիկայի :

Մեր զարմանքն ու պիտանքը չափ չունէր, երեք չորս ամիսէ ի վեր առիթ չէին փախցուցած Սաղաթիւեանը մեզ ներկայացնելու իբրեւ կեղծիքի մարմնացում մը, իբրեւ բարոյական հրէշ մը, անարժան ո՛ր եւ է վստահութեան եւ անաւանելի՛ իր քսու բնաւորութեամբ : Այս մարդիկը՝ 100 անաւանելի՛ իր քսու բնաւորութեանի վրայ ամենէն անդամ խօսած էին մեզ Սաղաթիւեանի վրայ ամենէն աննպատակ ու ամենէն գայթակղական ոճով : Ի՞նչ պատահած էր յանկարծ որ հիմա այդ մարդը առաջ կը քշէին : Առ համ էլ յանկարծ որ իրենց դաւադրական ծրագիրն Ամերիկայում ըսենք միայն որ իրենց դաւադրական ծրագիրն Ամերիկայում ըսենք միայն որ իրենց գաւադրական համար՝ իրենց երազած գործիկայի մէջ ալ յաջողեցնելու համար՝ իրենց երազած գործիքը տեսած էին Սաղաթիւեանի մը տխուր անձին մէջ :

Այս առթիւ տեղի ունեցաւ միջադէպ մը, որ կրնայ յստակ գաղափար մը տալ, թէ ի՞նչ տեսակ մարդոց հետ գործ ունեցանք. — Պ. Խուչպուլեան՝ համաձայն նախապէս յայտնած իր կարծիքներուն՝ նոյն ժողովին մէջ պնդեց զարձեալ, թէ Սաղաթիւեան անարժան է այդ պաշտօնին եւ թէ անիկա մնամ է այլ եւս յեղափոխութեան համար :

Ու անա այդ պարոնները՝ փոխանակ իրենց ամօթալի իրաւապաշտութենէն դուրս գալու, ամէն անարդանք տեղահալուցին պր. Խուչպուլեանի դիմուն : Ու Սաղաթիէ Սաղունի՛ մինչեւ իսկ համարձակեցաւ յանկարծ «բող, կեղծարար ու վատ» եւն. անուանել Պր. Խուչպուլեանը, իր բնկերը որու մասին մի՛նչեւ այդ օրը յարգանքով ու համակրանքով միայն խօսած էր մեզ :

Սաղունի Սաղաթիէ՛, այդչափով ալ չի բաւականացաւ եւ կատարելու սպառնական շարժումներով եւ իր կինտոյի անպարկեշտ հայհոյանքներով յարձակեցաւ Խուչպուլեանի վրայ : Աթոռները բարձրացան օդին մէջ : Եւ ժողովը խանգարուեցաւ :

(Տե՛ս արձանագրութեան տետրակը, — երես 33, ստորագրուած ամենքէն) :  
Վիճաբանելու այս վայրենի ձեւը մէկէ աւելի անգամներ կրկնուեցաւ յետոյ նո՛յն մարդոց կողմէն :  
Այս միջադէպէն երկու օր վերջ, Պր. Խուչպուլեան

47/2-87

առաջարկեց որ արձանագրութեան մէջ պզտիկ յաւելում մը ըլլայ, այսինքն՝ աւելի որոշ գրութի իրողութիւնը, թէ նախադրձակ եղողը Սագունի Սաղաթիէն էր :

Մեր զարմանքն ու զգուսնքը դարձաւ անհուն եզաւ, երբ Պր. Արզումանեանի այս առաջարկին վրայ, Կարապետ Մարտիկեան՝ նստած տեղէն բարձրանալով հետեւեալ խարդախ պատասխանը տուաւ. — Առաջնի արձանագրութիւնէ կ'ուզես, ուրեմն մենք ալ կը վկայենք, թէ դուն հայհոյեցիր Սաղաթիէին, ան ալ ոտքի ելաւ, զբասեղանին առջեւ կեցաւ ու բան մը չէր ընէր քեզի, բայց դուն աթոռը վերցուցիր, վրան վազեցիր եւ պիտի սպաննէիր խեղճ մարդը . . . . . — Այսպէս չեղա՞ւ, հարցուց մեզի ալ :

— Աժօ՛թ է, տեղը նստէ՛, ըսինք միայն, չի կրնալով մարդկօրէն ո՛ր եւ է մեկնութիւն տալ այս հրէշային խեղաթիւրումին ու այս լկտի յանդգնութեան որով մեր վկայութեան կը դիմէր եւ որ սակայն կը պարզէր, թէ այս մարդիկը ո՛րքան վարժ են զէպքերն ու իրողութիւնները իրենց ուզած այլանդակ ձեւով ներկայացնելու՝ ամենապարզ ու ամենուս ծանօթ ճշմարտութիւն մը իսկ ուրանալով :

Եւ՛ ինչ որ հաւասարապէս ցաւալի ու աններելի էր, այս մարդիկը՝ հակառակ կատարուած ձուլումին, հակառակ իբր մէ՛կ մարմին գործին համար միայն մտածելու տարրական պարտականութեան, այս մարդիկը՝ կեղք. վարչութեան ժողովներուն կը մասնակցէին հատուածական նեղ ու անձուկ հաշիւներէ մշտա՞մ միշտ արձագանդ դառնալով մէկը միւսին, առանց նո՛յն իսկ զիրար հասկցած ըլլալու — եւ միշտ պարտականութիւն մը համարելով միարեւմտեան մերժել ամեն առաջարկ որ մեր կողմէն կը բղխի :

Չենք կրնար հրապարակաւ պարզել հոս ամեն իրողութիւն. ուստի պիտի թուենք այն կէտերը միայն որոնց հրապարակումին մէջ զանազան անդարմանելի անպատեհ հոսթիւներ չենք կրնար նշմարել :

1902 Յուլիս 23ի նստին մէջ, երբ «Հնչակ»ի եւ «Նոր կեանք»ի կանոնաւոր հրատարակութեանց մասին կարգահանց կ'առաջարկէր մեզ նախ եւ առաջ «Հնչակ»ին ու «Նոր կեանք»ին մէջ հրատարակութիւնի ք. ՏՐՈՒԱՆ ՄԸ ՆԻՒՐԵՐՈՒՆ ՏԱՆԸՂ ՊԱՏՐԱՍՏԵԼ :

Այս անհաւատալի, աներեւակայելի եւ բոլորովին նոր՝ օրինակ առաջարկը զարմանք պատճառեց մեզի, ու սկսանք բացատրել, թէ ի՞նչպէս անկարելի է ո՛ր եւ է թերթի համար առաջուց տարուան մը նիւթերու կամ բովանդակութեան ցանկ պատրաստել :

Արզումանեանց կը պնդէր :  
Ու անա կարապետ Մարտիկեան եւ Սաղաթիէլ Սագունի անմիջապէս արձագանդ տուին անոր .  
— Ճիշդ է Համբարձումին ըսածը, ճիշդ է :

Ի՞նչ ընենք, Պահանջեցինք Սաղաթիէլ Սագունիէն որ մեզի ալ բացատրէ, թէ ի՞նչ հասկցած է Համբարձումին խօսածներէն :

— Ախր մի ուղղութիւն պէտք է ունենալ :  
Դիտել տուինք — միշտ ի գու՛ր, — թէ Պ. Համբարձում ուղղութեան մասին չէ որ կը խօսի, այլ՝ «Հնչակ»ի եւ Նոր-կեանքի բովանդակութեանց տարուան մը ցանկը կանխաւ պատրաստել կ'առաջարկէ :

(Տես արձանագր. երես 43, ստորագրուած ամենքէն)  
Ժողովին մէջ հաշուակալի ընտրութիւն պիտի կատարուէր : Կարծիք յայտնուեցաւ այդ պաշտօնը յանձնել Կեղք. վարչութեան մէկ անդամին, որ կրկնատուժար ուսած ըլլայ :

Պր. Համբարձում Արզումանեանց խօսք առաւ իսկոյն .  
— Ամենէն յարմար հաշուակալը, գէթ այստեղ գտնուողներուն մէջ, Սաղաթիէն է :

— Իրա՞ւ կը հարցնենք :  
— Այո՛, որովհետեւ ասկէ առաջ մեր հաշիւները նա է պահել :

Դժուար չէր հասկնալ, թէ հոս ալ հատուածամտութիւնն էր խօսողը՝ որ աղայամտութեան կը հասնէր, ու մենք՝ որ գիտէինք, թէ Սաղաթիէլ Սագունին՝ շիլինի եւ բէննիի հաշիւ մը իսկ ուղիղ կատարելու կարող մարդ չէ՞ ուղղակի իրեն հարցուցինք, թէ հաշուակալութիւն գիտէ՞ իրօք :

— Տո՞մարակալութիւն չեմ ուսել, պատասխանեց Պ. Սաղաթիէլ՝ անակնկալի մը եկած : (Տես արձանագր. երես 46, ստորագրուած ամենքէն) :

Այս միջադէպը կը պատմենք, ո՛չ թէ Սագունի Սաղաթիէլի մը գիտութեան սահմանը գծելու աւելորդ մտածումով, այլ պարզապէս ցոյց տալու համար թէ Պր. Համբարձումը, այլ պարզապէս ցոյց տալու համար թէ Պր. Համբարձումը,

ձուժ եւ իր ընկերները ի՛նչ կերպով կը յայտնէին իրենց կարծիքը եւ ի՞նչպէս իրենց հատուածական ոգին առաջ կը քշէին , նո՛ր յն իսկ ի վնաս գործին :

Այս օրինակները կարելի է բազմապատկել՝ քաղելով նոյնպէս արձանագրութեան տետրակէն ա՛յնպիսի կտորներ , որոնց տակ իրենք ալ ստորագրած են եւ զորո հերքել անկարելի է :

Մեր այդ եզական պաշտօնակիցները՝ աներեւակայելի դիւրութիւն մը ցոյց տուած են միշտ ստելու :

Պր Համբարձում Արզումանեանց 1902 Յուլիս 29ի նիստին մէջ կարծիք յայտնած է , հետեւեալ բառերով՝ թէ՛

«Սապահգիւլեանէն դատ ուրիշ մէկն ալ անհրաժեշտ է որ գործիչ զրկուի Ամերիկա» (Տես արձանագր. երես 50) :

Անգին սակայն , Ամերիկայի նահանգ , վարչութեան ուղղած իր մէկ նամակին մէջ , կը գրէ անամօթաբար .

«Մենք նկատել տուինք , թէ Ամերիկա երկու գործիչ ուղարկելու հարկ չիկայ » :

1902 Յուլիս 25ի նիստին մէջ , կեդր. վարչութեան մէկ կարեւոր որոշումը գործադրութեան ղնելու համար կարողորութիւն մը առաջարկեցինք : Մեր պաշտօնակից պաւլոնները՝ իրենց յաւիտենական մերժումի սխթմով , այս անգամ ալ հակառակեցան եւ ուղեցին վիճարանութիւնը խանդարել իրենց սովորական վայրենի ձեւով :

— Դուք արուած որոշումները չէք գործադրում :

— Ո՞ր որոշումը , ըսէք , մէ՛կ հատ մը անաւասիկ արձանագրութեան տետրակը , կը պատասխանենք :

— Այդպէս բան չլինիր :

Դարձեալ ազմուկ , դարձեալ ըմբռնութեան փորձեր : Ուժօգովը կը խանգարուի : (Տես արձանագր. եր. 52) :

Իրաց այս անսանելի վիճակին մէջ , բացարձակապէս ապարդիւն եւ անկարելի գտնելով այս մարդոց հետ մեր գործակցութիւնը , հետեւեալ հրաժարականը տուինք մեզ ընտրող շրջանակներուն .

Միւրեւի ընկերներ ,  
Լօնտոն , 29 Յուլիս 1902

Մենք՝ Հնչակեան կուսակցութեան միացեալ կեդր. վարչութեան մէջ նախկին Հնչակեան վերակազմեալ հա-

տուածը ներկայացնող երեք անդամներս՝ կուզանք մեր հաւաքական հրաժարականը տալ մեզ ընտրող շրջանակներուն :

Հնչակեան միացեալ կեդրոն. վարչութեան մէջ մեր անդամակցութիւնը շարունակել , այլ ե. ս. անկարելի նկատած ըլլալով , կը յայտարարենք թէ մեր այս որոշումը անդառնալի է : Ու կ՛աւելցնենք որ չպիտի կրնանք երկար ժամանակ մնալ Լօնտոն :

Ուստի կը խնդրենք Հնչակեան կուսակցութեան նախկին վերակազմեալ հատուածի ընտրողական շրջանակներէն , որ՝ առանց ո՛ր եւ է ձգձգումներով ժամանակ կորսնցնելու՝ իսկոյն երեք ընկերներ ընտրեն՝ Հնչակեան ներկայ կեդր. վարչութեան մէջ մեզի յաջորդելով նախկին վերակազմեալ հատուածը ներկայացնելու համար :

Աւելորդ է ըսել որ այս ընտրութիւնը պէտք է անդի ունենայ բացարձակ գաղանապահութեամբ եւ շրջանայեաց զգուշաւորութեամբ :

Ձեր ընտրութեանց արդիւնքը պէտք է անյապաղ հաղորդէք մեզ մեր հետեւեալ հասցէով :

Ընկերական սիրալիր բարեւներով

(Ստորագրութիւնք)

Պաշտք համարեցինք մեր վերոյգրեալ հրաժարականին ետ մասնաւոր ընկերներու միջին ուղարկել նաեւ հետեւեալ բացատրական նամակը , ուր մեր բոլոր նկատողութիւնները պարզուած են արդէն :

Սիրելի ընկերներ ,

Ներկայիս կուզանք յաղորդել ձեզ , թէ խորին ցաւով այլ անդառնալի վճռականութեամբ մը , մեր հաւաքական հրաժարականը տուած ենք նախկին վերակազմեալ հնչակեան ընտրողական շրջանակներուն :

Գիտակից՝ այսպիսի որոշման մը բովանդակ ծանրակշիռ հանգամանքին , չենք կրնար սակայն շիտատուանիլ . թէ մեր խղճին ու մեր յեղափոխական զգացումներուն բացարձակ ու անդիմադրելի թելադրութեամբն ստիպուեցանք յանդիլ անոր :

Մեր այս քայլը անշուշտ չպիտի կրնայ երբէք վերագրուի մեր յեղափոխական պարտաճանանչութեան ո՛ր եւ է չստիպով թուլացումին , քանի որ սրտապնդումն ունինք մը-

տածելու , թէ մեր նախկին բոլոր ընկերները , անոնք՝ որ մեզի տեսան գործին վրայ : չպիտի կրնան երբեք ամենահեռուոր կասկածն իսկ ունենալ մեր կողմէն ո՛րեւէ անբացատրելի դասալքութեան :

Գրեմնք նոյնպէս , թէ հնչակեան կուսակցութեան ներկայ վիճակը — այն խանդավառութեամբ որ կը տիրէ մեր շարքերուն մէջ , եւ այն յոյսերով որոնք հայ ժողովուրդը մեզի կը գարծնեն — ի՛նչ պարտականութիւններ , ի՛նչ կրկնապատկուած ճիգեր եւ ի՛նչ կորովի ու անձնուիրութեան անհաշիւ ու անխնայ վատուամեր կը հարկադրէ մեզի :

Պէտք չէ որ խանդավառութիւնը վիճի , պէտք չէ որ յոյսերը պատրանքներու վերածուին : Պէտք է մանաւանդ որ Հնչակեան կուսակցութիւնը տիրաբար կատարէ իր ազգային գերաւանց գերը , իր ինչն ակնկալուածը , իր պարտքը :

Կացութիւնը այսպէս գիտակցօրէն ի նկատի առած՝ ասորիսն ալ պիտի թուէր անշուշտ մեր կողմէն հրաժարուիլ ու հեռացիւն ո՛ր եւ է ինքնաբեր մտահոգութիւն :

Բայց հակառակ աւելի քան երբեք ուժգնօրէն գործին պլլուելու մեր բոլոր ջերմեռանդ կամաւորութեանը , այսօր ինքզինքնրս ստիպուած կը զգանք կանգ առնելու անողոք պատուարի մը առջեւ — զոր կը ստեղծեն անկարողութիւնը , փոքրողութիւնն ու տէրտուութիւնը — պատուարի մը առջեւ , զոր քսելէ չպիտի վարսնէիսք , եթէ անոր գէժ մաքառումն ալ՝ ներկայ փախուկ պարտային մէջ , իր շատ մը ազետուոր հետեւանքները չունենար կուսակցական տեսակէտով :

Այսօր , Հնչակեան կուսակցութեան կեդր. վարչութեան մեր միւս երեք պաշտօնակիցներուն հետ մեր գործունէութիւնը բացա՛ծակապէս անկարելի է :

Անտարակոյս ո՛չ մենք , ո՛չ մեր ընկերներ՝ ո՛ր եւ է չափով կրնայինք ո՛ր եւ է ազդեցութիւն ունենալ ձին հընչակեան հատուածին վարչական ընտրութեանց վրայ : Այդ վարչութեան մէջ ապահովեցին՝ ձին հնչակեան հատուածը ներկայացնող երեք անձերու ներկայութիւնը , երեք անձերու , որոնց կեդր. վարչութեան անդամակցութիւնը՝ օրինապէս անառարկելի՝ չկրնար սակայն արդարանալ բանա-

ւորապէս , տրուած ըլլալով իրենց վարչական անընդունակութիւնը մտաւորական շքաւորութիւնն ու յեղափոխական անխառն տգիտութիւնը : Անշուշտ մեր այդ պաշտօնակիցներուն մտաւորական անբաւականութիւնը չպիտի կրնար անանցանելի խոչընդոտ մը ըլլալ հնչակեան գործունէութեան առջեւ , եթէ սակայն կոյր ու օխթեմաթիք կասկածոտութիւն մը՝ ամէն վայրկեան , ամէն հաւաքական արարքի առթիւ երեւան չիզար բրտօրէն , ու չկաշկանդէր մեր գործունէութեան բոլոր եռանդոտ տրամագրութիւնները : Մեր երեք պաշտօնակիցները չեն ուզեր՝ իրենց անձեռնահասութեան պարկեշտ ու համեստ գիտակցութեամբը սողորուած աջակցիլ մեզի , եւ միեւնոյն տոնն կը հակառակին՝ առանց ո՛ր եւ է բանաւոր ու արդարացի առարկութեան՝ այն բոլոր առաջարկներուն ու ծրագիրներուն դէմ , որոնք մենէ թղթած ըլլալուն համար միայն անսպասան անընդունելի են՝ իրենց տեսակէտով :

Նախապէս մեր բոլոր հաշտարար ջանքերը չխնայեցինք չ համերաշխութիւն մը գոյացնելու համար կուսակցական կենսական խնդիրներուն շուրջը , բայց՝ հակառակ մեր բոլոր խղճահար թեյագրութիւններուն ու եզրայրական վերաբերմունքին՝ դժբախտութիւնն ունեցանք հաստատելու , թէ անկարելի պիտի ըլլար գործի տեսակէտով այդ անընթաց համերաշխութիւնը իրենց եւ մեր միջիւն :

Այսպէս կամ այնպէս , ակներեւ է սակայն որ յեղափոխական գործին վրայ բարձրօրէն նայելու անընդունակ , յեղափոխական արդի բազմակողմանի պահանջներուն անգիտակ , հատուածական անձուկ եւ անխմաստ մտահոգութիւններով միայն տողորուած այդ երեք անձերը՝ հնչակեան կեդրոնական վարչութեան անբամի իրենց պարտականութիւնները խղճմտօրէն կատարած ըլլալ կը թուին՝ մեքենարար իրարու արձագանգ գտնալով միայն , առանց ո՛ր եւ է սեփական համոզումի ու կասկածոտ վերաբերում մը ունենալով դէպ ի մեր ամէն մէկ խօսքն ու առաջարկը :

Իրաց այս վիճակին մէջ , աւելորդ է ըսել , ո՛ր եւ է գործկարգադրել , ո՛ր եւ յեղափոխական քայլ առնել , ո՛ր եւ է ձեռնարկ սկսիլ անկարելի կը դառնայ :

Արդ՝ տրուած ըլլալով այս ողբալի կացութիւնը՝ մեր հոս մնալը մեր խղճին առջեւ չի կրնար երբեք արդարանալ ո՛ր եւ է կերպով :

Դասալքութիւնը, բո՛ւն ու ամենավատ գասալքութիւնը պիտի կայանայ այն գիտակից, այն մեղսակից համակերպութեան մէջ, զոր բնորոնած պիտի ըլլայինք հոս մնալով, հոս, յեղափոխական գործին գլուխը, գիտնալով, համոզուած ըլլալով որ ներկայ հանդամանքներու մէջ չպիտի կրնային, բան մը ընել:

Այս ծանրակշիռ որոշումը տուած ատեննիս՝ ասարակոյս չկայ որ սրտովին կապուած կը զղանք ինքզինքնիս գարձեալ Հնչակեան կուսակցութեան, որուն ներկայ բարգաւաճման ու յուսադրիչ կենդանութեան առջեւ ո՛ր եւ է արգելք կամ խոչընդոտ յարուցանելէ զգուշանալու ուշադիր նախանձախնդրութեամբ, պարտք համարեցինք մեր հրաժարագրին մէջ վերոյիշեալ պատճառները թուելն ու նոյն իսկ զանոնք զգացնելը բոլորովին զանց բնել:

Սիրելի ընկեր,

Այդ պատճառները չուպեցինք ու չենք կրնար քողարկել ձեզմէ որովհետեւ անհրաժեշտ է որ գուք գիտնաք զանոնք, նախ՝ որպէսզի տեղեակ ըլլաք կուսակցութեան բուն կացութեանը, երկրորդ՝ որպէս զի փութաք առաջքն առնել այս տխուր վիճակին:

Պէտք չէ սակայն որ ո՛ր եւ է նոր գայթակղութեան մը գիտակից կամ անգիտակից գործաւորներն ըլլանք, Ա՛յս թող ըլլայ մեր առաջին գերազանց մտահոգութիւնը:

Պէտք է որ միացեալ հնչակեան ընկերներու ներքին խանդավառ համերաշխութիւնն անվճար մնայ: Ասոր հրաժարականը ո՛ր եւ է հատուածական վէճերու եւ անհամաձայնութիւններու պատճառ դարձնելէ:

Չեր բոլոր անմիջական ճիգը պէտք է ըլլայ անյապաղ ընտրել տալ երեք այնպիսի անձեր, որոնք կարող ըլլան մեր երեք պաշտօնակիցներուն լեզուէն հասկնալ:

Եւ որովհետեւ մ՛ը հոս աւելի երկար մնալէն կրնան շատ անպատեհութիւններ ծագիլ եւ զորքը կրնայ տուժել անհրաժեշտ կը համարինք թելադրել որ իսկոյն ամերիկայէն առժամանակեայ յանձնախումբ մը փութացնեն՝ որ պաշտօն ունենայ նախկին վերակազմեալ հնչակ, հատուածը ներկայացնել հոս մեր տեղ մինչեւ նոր ընտրուածներուն ժամանումը:

Ընկերական սիրալիք բարեւներով՝  
Հնչ. կուս. կեդր. վարչ. հրաժարեալ անդամներ  
( Ստորալքութիւնք )

Յ. Գ. — Պարտք կը համարինք անգամ մըն ալ շեշտել հոս բացարձակ գաղանապահութեան մը անհրաժեշտութիւնը: Մեր հրաժարման պատճառները պէտք է հաղորդէք միայն ձեր յարմար գասած ա՛յն ընկերներուն, որոնց կարմխալստի ձեր յարմար գասած ա՛յն ընկերներն անվիճելի են, զապահութիւնն ու խորհրդապահութիւնը անվիճելի են, որոնք ամէն երաշխաւորութիւն կը ներշնչեն իրենց շրջանակին մէջ վերլուծուած եւ անհամերաշխութիւն շարունականերու միանգամայն կրնան իրենց անհասակից անգրեցութեամբը անգլի ունենալիք ընտրութեանց յաջողութիւնն ապահովել:

Վեր. հնչակեան բոլոր մասնաճիւղերը մերժեցին ընդունիլ մ՛ը այս հրաժարականը եւ՝ նկատի ունենալով իր բերու վտանգաւոր կացութիւնը՝ մեր վրայ պարտք դրին շարունակել այս տխուր պայքարը՝ հնչ. կուսակցութեան ներքին թշնամիներուն դէմ: Ու թէպէտ մեր զբաղած ցաւն ու զգուշանքը այնքան մեծ էր եղած որ անդամալիքներն հրաժարել որոշած էինք, հնչակեան կամքին ու կատարուելիք գործի ստիպողականօրէն անհրաժեշտութեան առջեւ խոնարհեցանք, մանաւանդ որ այս միջոցին երեւան եկան կարգ մը նոր իրողութիւններ, որոնց առջեւ լռելը ոճիւր մը պիտի նշանակէր եւ որոնք՝ անգամ մըն ալ, ու ա՛յլ աւելի յատկօրէն՝ կ'ապացուցանէին, թէ չին հատուածի կողմէն մեզի պաշտօնակից բնաբուած մարդիկը պարզապէս կեղծ ու խարդախ համաձայնութեան մը գերակատարներն են եւ շարժումն ու ամէն անպատեհ միջոցներով կը ձգտին

1. վարկարկելի եւ անուանարկելի վերակազմեալ հնչակեան գործիչները:

2. Աւետիս Կարաբեկեանին յանձնել դարձեալ կուսակցութեան ղեկավարութիւնը:

Այս իրողութեամբ կը գրդեն, կը լարեն նաեւ Լոնտոնի մէջ չին հատուածը ներկայացնող 3-4 հոգիները:



որոնք մասնաճիւղի ժողովներուն մէջ կը սկսէին կարգաք  
1896ին Աւետիս Նազարբէկեանի կողմէն հնչակեան գոր-  
ծիչներուն դէմ հրապարակ հանուած զգուելի շրջաբերա-  
կանները, եւ կը սկսին բացէ ի բաց նախատել, անու-  
անարկել առհասարակ վերակազմեալ հնչակեան գործիչները  
եւ բրօքաքանա ընել՝ ի նպաստ Աւետիս Նազարբէկեանի :

Հակառակ որ Հնչակեան բանակցութեանց սկիզբն իսկ  
երկու կողմէն ընդունուած էր թէ Աւետիս Նազարբէկեան  
անուն անձը Հնչակեան կուսակցութեան հետ ո՛ր եւ է կապ  
եւ յարաբերութիւն չպիտի ունենայ, մեր այդ պաշտօնա-  
կիցները՝ 1902 յուլիս 23ի նիստին մէջ «Հնչակ»ի խմբագրի  
կ'առաջարկէին այդ նոյն Աւետիս Նազարբէկեանը :

Ոստիւ մերժուեցան : (Տես արձանագր. երես 43, «մենքէն  
ստորագրուած») :

Նոյն ժողովին մէջ պր. Կարապետ Մարտիկեան՝ չըբ-  
մեղանք մը հնարեալ ստիպուած՝ կ'աւելցնէր :

«Ես իբրեւ օրինակ Նազարբէկը յիշեցի. երե ոչ Նազար-  
բէկը գործ չունի մեզ հետ» : (Տես. արձանագր. երես 45,  
ստորագրուած ամենքէն) :

Ու պր. Համբարձում՝ արձագանգ պանալու իր սովո-  
րական կամաւորութեամբ՝ կրկնեց իսկոյն .

« Ա.ժ՛յ, իբրեւ օրինակ յիշեցուց մենք Նազարբէկի հետ  
գործ չունինք » : (Տես. արձանագր. երես 45, ստորագրուած  
ամենքէն) :

Նոյն պարոնները, Սաղաթիէլ Սազունի եւ Կարապետ  
Մարտիկեան՝ կը պնդէին որ «Հնչակ»ի տպարանին մէջ  
տպագրուի Աւետիս Նազարբէկեանի

« Չարախօս թղուկը՝ Համբարձում Առաքելեան եւ Ըւօր  
հասցէին » վերտառութեամբ պրօշիւրը :

Մերժուեցան : Եւ այդ մասին հետեւեալ որոշումը  
տրուեցաւ .

« Նոյնպէս որոշուեցաւ պր. Աւետիս Նազարբէկեանի  
պրօշիւրին համար մերժել ո՛ր եւ է աջակցութիւն ու զար-  
ձեալ կուսակցական ո՛ր եւ է յարաբերութիւն չունենալ իր  
հետ » : (Տես արձանագր. երես 25, ստորագրուած ամենքէն) :

Ու ահա այս բոլոր բերանացի եւ գրաւոր խոստում-  
ներէն, որոշումներէն ու յանձնառութիւններէն վերջ է որ  
իրենց աւելի քան շիւ ընթացքը կը շարունակեն . ուրանա-

զով ամէն ճշմարտութիւն եւ պարտականութիւն :

Պր Սաղաթիէլ Սազունի կովկաս կը գրէ որ Հնչակեան  
մասնաճիւղերն հոգան այդ պրօշիւրի հրատարակութեան  
ծախէւէրը :

Եւ ահա թէ ժամանակին ի՛նչ գրած է իրեն « Բանուոր »  
մասնաճիւղը, ինչպէս հաստատած ենք յետոյ մեր ձեռքն  
անցած ըլլալով բնագիրը պաշտօնական նամակին որմէ կը  
քաղենք հետեւեալ տողերը :

« Ձեր հասցէին փոխադրում ենք տասն անգղիական  
« ոսկի, որից հինգ ոսկին պէտք է ուղարկէք պ. Աւետիս  
» Նազարբէկեանին իւր բրօշիւրի հրատարակութեան հա-  
» մար, » եւն :

« Ի գիմաց «Բանուոր»ի վարչութեան  
Քարտուղար Նախագահ  
(Ստորագրութիւնք եւ կնիք)

Պր. Սաղաթիէլ Սազունի՝ ո՛չ միայն այս նամակը չէ  
յայտնած կեղք՝ վարչութեան, այլ նաեւ Հնչ. մասնաճիւղի  
մը կողմէն զրկուած այդ գումարի մասին ալ բացարձակ  
գոութիւն պահած է մինչեւ վերջ :

Իսկ Համբարձում Արզումանեանց՝ « Մենք Նազարբէկի  
հետ գործ չունինք » ըսելէն, ստորագրելէն վերջ է դար-  
ձեալ որ իր դրժումը կը շարունակէ : Հնչ. մասնաճիւղե-  
րու զրամները կ'ուզէ յատկացնել պրօշիւրի մը, որուն հը-  
րաւորութեան մասին ո՛ր եւ է աջակցութիւն բացարձա-  
կապէս մերժուած է կեղք՝ վարչութեան կողմէն՝ իբր գր-  
դռիչ զրութիւն մը, ուր 1896ի գէպքերն ա յնքան խե-  
ղաթիւրուած են, գէպքեր, որոնց վերջու շուքը կրնար վար-  
ձեալ մարած, թաղուած կիրքերն արժարձել զուցէ :

Եւ ոչ միայն այդ պրօշիւրին հրատարակութեան հա-  
մար Հնչակեաններու կը զիմէ, այլ եւ՝ գաղտնի կը գրգէ  
ընկերները, որպէսզի հանրագրութիւն պատրաստեն եւ Ա-  
ւետիս Նազարբէկեանի աշխատակցութիւնը պահանջեն :

Սա թէ ի՛նչ կը գրէ պր. Համբարձում Արզուման-  
եանց իր ծանօթ գաւազրական նամակին մէջ .

« Սիրելի ընկերներ, աշխատեցէ՛՛՛ք տեղւոյդ գլխաւորա-  
» պէս վերակազմեալ ընկերներին հետ միասին կամ աւելի լաւ  
» է ուղղակի նրանց կողմից, մի ընկերական հանրագրով  
» պահանջ ներկայացուի կենդրոնին, այդ մասին ուրիշ

» տեղեր էլ եմ գրել ... երբ պահանջները գրսից կզան »  
» հարցը լաւ ընթացք կուտայ... »

Մեզմէ զազտնի եւ հակառակ տրուած որոշումներուն , հնչակեան դրամով տպագրել տուին վերջապէս Աւետիս Նազարէկեանի պրօշիւրը , որուն տպագրուած մէկ օրինակը մեր մօտ կը մնայ եւ զոր սակայն չհամարձակեցան ցրուել , քանի որ ի միջի այլոց՝ այդ պրօշիւրին շուրջը իրենց լարախաղացութեան մանրամասնութիւններն ալ յայտնուեցան այսպէս :

Առանց այլեւս մեր կողմէն բառ մը , խորհրդածութիւն մը աւելցնել պէտք տեսնելու , հոս կը գնենք նոյնութեամբ պ . Համբարձու մէկ նամակը , զոր՝ հատուածական հաշիւներով՝ ուղղած է միայն հին հնչակեաններու , եւ ուր որոշ կը տեսնուի իր եւ իր ընկերներու հոգին :

« Սիրելի ընկերներ ,

» Ակնկառոյց սպասում էի նամակիս պատասխանին : Ես չեմ իմանում նամակս չէ՞ք ստացել իսկ թէ որ ստացել էք , հազա ի՞նչ է պատահել որ չէք ուզում պատասխանել : Մինչդեռ ինչպէս նամակի պարունակութիւնից , ձեզ ուղղուած աւանջարկն հասկանալի էր , եթէ հաւատում էք ինձ՝ որպէս անկեղծ ընկերի միւս կողմից ես կապած չունիմ որ զուք սիրում էք Աւօին եւ նախանձախնդիր էք նորա պատուին այնքան որքան ես . պէտք էր պատասխանած լինէիք մինչեւ հիմա , ձեր լուծութիւնը աւելի քան աարօրինակ եւ զարմանալի է , կրկնում եմ , եթէ ստացուած է նամակս : Ինչ եւ իցէ , առաջին նամակովս ձեզ գրել եմ . Աւետիսը պատասխանել է Հ . Առաքելուրի ձեռագիրը ուղարկել էր կենտրոն , ըստ իրենց ասութեան , կարդալուց յետոյ հրապարակելու համար կենտրոնի տպարանում . կենտրոնի տպարանի հրատարակելու մտքին սաստիկ հակառակել էր պր . Հ . Սոչալուբանը , ո՞վ գիտէ ի՞նչ յետին մտքերով . մերոնց կողմից մէկի հակառակութիւնը էլ հասկանալի է թէ ի՞նչ հետեւանք կ'ունենանար ... եւ ուստի « Հնչակ » ի տպարանում հրատարակելու խորհուրդը ջուրն է ընկնում :

» Աւետիսը փող չունէր , իսկ բրօշիւրի հրատարակութիւնը յետաձգել անկարելի էր , քանի որ առանց այդ էլ շատ էր ուշացել . եթէ ինքը միջոց ունենար ոչ մի տեղ չէր գիմել , կը հրատարակէր եւ « Անճարակ թղուկ » ին վաղուց

Չախջախած կը լինէր . ի՞նչ պէտք էր անել : Սպասելով Աւետիսը հօ չէր հարստանալու եւ առանց գրսից՝ ընկերներ ի եւ Աւետիսին յարգողներ ի կողմից օգնութիւն հասնելու չէր հրատարակուիլ :

» Պր . Մ . Սագունին , Աւետիսի ամենալաւ բարեկամը , սրտանց փափաքում էր հրատարակուած տեսնել այդ բրօշիւրը : Եւ առանց երկար մտածելու , ձեռագիրը ուղարկեց Աւետիսին եւ գրեց որ անմիջապէս յանձնէ տպագրութեան , առ այժմ յանձն առնելով սկզբնական ծախքերը , մինչեւ մնացածի համար զիմէ կովկաս ընկերներին , մինչեւ տպագրութեան ամբողջանալը : Ես էլ իմ կողմից յանձն առայ գիմել ձեզ , ինչպէս արդէն գիտէք իմ նախկին նամակից :

» Բրօշիւրը յանձնուած է տպագրութեան . տպագրուած է հազար օրինակ . Աւետիսը գրում է . հազար օրինակի համար ծախք կը լինի 14-15 անդրիական ոսկի եւ մինչեւ չվճարուի չենք կարող ստանալ բրօշիւրները . այսպէս , սիրելի ընկերներ , զուք տեսնում էք որքան արդարացի կերպով սպասելի էր , որ զուք ձեր բաժին օգնութիւնը չուտափոյթ հասցնէիք կամ այստեղ կամ ուղղակի իրան . Աւետիսին , որի հասցէն նոյն նամակով ուղարկեցի ձեզ , ձեր եթէ ուղղակի իրեն կ'ուղարկէք ուղարկած նպատակին բացատրութիւն տուէք , թէ ի՞նչ նպատակով էք ուղարկատրութիւն տուէք , այսպիսով կէսը մենք հոգաեթ ռսկի էլ զուք հաւաքէք , այսպիսով կէսը մենք հոգաեթ կը լինինք . իսկ բրօշիւրները ուր որ ուղարկենք , ընկերներ ի միջեւ թէ ընկերներ ընդունելով , որը մի տեսակ փոխարէնը կամու որ նուէրներ ընդունելով , բայց ոչ հանգանակուհանգանակութեան ձեւ առնելով , բայց ոչ նախապէս ցուի Աւօի կրսւմ նիւթական նեղութիւնը , որով նոյնպէս միջոց կուտանք իրան նուիրուելու գրական աշխատութիւնը կուտանք իրան նուիրուելու գրական աշխատութիւնը որ այնքան փափաքողն է , եթէ ստիպուած չլինի օրական չոր հացի համար ուրիշ զբաղում որոնելու : Կովկասի ընկերները այդ կեղտոտ բրօշիւրի հրատարակութիւնից յետոյ , առանձին գուրգուրանք են տածում զէպ ի անել թագուն նպատակներով ջիզուիզական միջոցի գիմող սիրեցեալ Աւօն , մինչեւ անգամ փորձել են շան սատակ ձեւ թագուն նպատակներով ջիզուիզական միջոցի գիմող Հ . Ա . ին եթէ վերջինս գուշակելով իւր զլինի գալիքը փախուստ չիտար : Անպիտանը կարծել է , թէ գորանով վերջնապէս պիտի խորտակէ այն մարդին , որի ստուերից

անգամ սոսկում են, չմտածելով որ գործած չարիքը մեծ բարիք է գառնալու նորան եւ իսկական չարիքը իրան համար :

« Թե ինչ ծրագիր ունինք առայժմ ոչինչ չեմ գրել, մինչեւ որ մեր Ամերիկայի ներկայացուցիչը տեղի հասնէ . դուք նորան հետ կը խորհրդակցէք ձեր գործողութեանը մասին, մեր ամենախախտուհ սեղը Ամերիկան է, որի համար մասնաւոր ջանքերով եւ վերջին ծայր խոհեմութեամբ պէտք է գործել, մնացած կողմերին համար, որ . կովկասում, Պարսկաստանում իրերը լաւ երեւոյթ ունեն, մասնաւանդ վստահ ենք թէ կարող ենք լաւ ուղղութիւն տալ : Գուք մանր-մութեամբ եւ անկեղծութեամբ բացուեցէք պ. Սապահին եւ միեւնոյն ժամանակ նրան առէք ձեր պաշտպանութեան տակ, որպէս Ռուսաստանցի իր պարզութեամբը կարող է էնթրիկները զո՞ գառնալ եթէ դուք ուղղութիւն չիտաք իրան, եւ միւս կողմից էլ զգուշութիւններ չձեռք առնէք :

« Աւետիսը պարբերաբար ունի ուրիշ աշխատութիւններ, որի հրատարակութեան հոգը նոյնպէս պիտի ծանրանայ ընկերներու վրայ . այս բրոշիւրը տեսնելուց յետոյ, կարծում ենք լաւ պիտի լինի բաժանորդներ գտնել եւ բաժանորդաքնով հրատարակութեան տալ միւս աշխատութիւնները . յամենայն դէպս՝ այդ դեռ ապագայի գործ է, ներկայի համար մտածենք առայժմ :

« Ամսոյս 16ին, վաղը, շաբաթ օր, ճանապարհ կ'ընկնեն մեր ներկայացուցիչները, պ. Սապահիւսեան եւ մի ոմն պ . Բ . . . :

« Սիրելի ընկերներ աշխատեցէք տեղւոյդ դիւստորապէս վերակազմել ընկերները հետ միասին կամ աւելի լաւ է ուղղակի նրանց կողմից, մի ընկերական հանրագրով պահանջ ներկայացուի կենտրոնը, « Զնչակում » մեր Աւօր աշխատակցութեան համար . այդ մասին ուրիշ տեղեր էլ եմ գրել . . . երբ պահանջները դրսից կ'գան, հարցը լաւ ընթացք կուտայ :

« Հաւանօրէն եթէ փորձանք չպատահի, պր . Սապահը շաբաթ օրը հասնի եւ թերեւս սոյն նամակիս հասնելուց առաջ իրարու հետ տեսնուէք :

« Հասցէս կենտրոնի տան վրայ, այնտեղ էլ բնակւում եմ

« Աւօր հասցէն՝ Մ. Ա. . .  
« Մնամ սիրալիր բարեւանքով  
Չեքդ՝ Հ. Արզումանեանց »

Այս բոլոր ստու թիւներէն, դաւերէն եւ երկմտութիւններէն յետոյ . Համբարձում Արզումանեանց, Սաղաթիէլ Սաղունի եւ Ս. Տաշերեան կուսակցութեան բոլոր գոյքերը ուղղակի իրենց անձնական տրամադրութեան տակ պահելու խարդախութեան կը դիմէին, յուսալով թէ այդպէսով պիտի յաջողին դուքէ իրենց բոլոր մեքենայութիւնները դիւրացնել :

1902 յունիս 3ին, կեղրոն . վարչութեան երկրորդ նիստին մէջ իսկ, որոշուեցաւ կուսակցութեան համար բոլորովին նոր տուն մը վարձել եւ հոն փոխադրել երկու կողմի գոյքերը :

Տուն վարձելու աշխատանքն ստանձնեցին Սաղաթիէլ Սաղունի եւ կորապետ Մարտիկեան (տես. արձեպր. երես 2, ստորագրութեամբ ամենքէն) : Տան համար այս կարգադրութիւնն ընել անհրաժեշտ էր, որպէսզի տանտէրը երկու կողմէն հասար մարդիկ ճանչնայ իբր վարձակալ :

Peckham Ryeի 85 թիւ տունը մանաւանդ վերջահապէս փոխել որոշուեցաւ, այն միակ պատճառով որ քանի մը տարիէ ի վեր միմիայն հին հատուածի մարդիկը ճանչցուած են տան տիրոջ մօտ եւ հետեւաբար երկրին օրէնքով միմիայն իրենք սեփականատէր կը ճանչցուին տան մէջ գտնուած բոլոր գոյքերուն, մինչդեռ՝ ինչպէս « Զնչակ »-ը նույնպէս եւ կուսակցութեան բոլոր գոյքերը պէտք է գրտնուէին երկու կողմէն հաւասար թուով մարդոց իրաւասութեան տակ :

Սաղաթիէլ Արզումանեանց եւ Տաշերեան խմբակը սակայն, իր մեքենայութեանը մէջ ա՛յլ աւելի առաջ երթալով զանազան խարդախ ու անհրեւի միջոցներով, յայտնապէս սկսաւ ամէն ճիգ թափել՝ կուսակցութեան գոյքերն ուղղակի իր անձնական ու անմիջական տրամադրութեան տակ առնելու համար :

Այսպէս, տեսնելով որ կեղր . վարչութեան մէջ մեր իրաւունքներն ալ կը շարունակեն յայտնապէս բռնաբարուիլ, տեսնելով որ մեր առջեւ փակ կը մնայ կեղր . վարչութեան պաշտօնավարը, տեսնելով, հաստատելով մանաւանդ որ պարոնայք Համբարձում Արզումանեանց, Սաղունի Սաղաթիէլ եւ Ս. Տաշերեան կուսակցութեան գոյքերը իրենց ուղղակի եւ անձնական տրամադրութեան տակ պահելու համար :

հելու համար խարդախ միջոցներու կը դիմեն , հետեւեալ բողոքագիրը զրկեցինք .

« Հնչ. կուսակցութեան կեդր. վարչութեան տնօրէն »  
« պ. պ. Համբարձում Արղումանեանց, Սազունի Սաղաթիւլ . »  
« եւ Ս Տաշերեան .

Հոնտոն  
« Պր. Համբարձում Արղումանեանց » Հնչակեան կուսակցութեան 85 թիւ տան մէջ բնակելու համար իր վայրէջում թոյլտուութիւնը այսօր չարաչար կը դործածէ :

« Պր. Համբարձում Արղումանեանց իր անձնական սեփականութեան պէս կը վարուի կուսակցութեան բոլոր դոյքերուն հետ՝ որոնք կը գտնուին միեւնոյն տան մէջ :

« Պր. Համբարձում Արղումանեանց՝ կուսակցութեան պաշտօնաւայրը, — որ նոյնպէս կը գտնուի վերոյշիջեալ տան մէջ — կը փակէ մեր՝ այսինքն կեդր. վարչութեան երեք անդամներու՝ առջեւ .

« Ամսոյս Ակին, երբ պ. Չիթճեանն ալ միասին ըլլալով ժողովի եկանք պաշտօնաւայրը, կուսակցութեան տունը, պ. Համբարձում չուլից բանալ դուռը, ու երբ մենք մեր անկորնչելի ու ամենատէական իրաւունքներուն անուսովը պահանջեցինք կեդրոնաւայրին դուռը մեր առջեւը բանալ, սպառնալով որ խելայիղ ձեւերով եւ պոռոչուքներով անդուզներէն վեր, իր սենեակը վազեց, զէնքով մը վերադառնալու երեւոյթով :

« Ասկէ դատ, զարձեալ դուք, երեքդ, պացած էք 85 թիւ տան տիրոջ մօտ, ու անոր ներկայացուցած էք ձեր մէջէն պր. Սագունին, իբրեւ նոյն ինքն M. Bellar. անունը, զոր կեդր. վարչութեան անդամներէն ոչ ոք իրաւունք չունի իւրացնելու :

« Այս պարագաները պարտականութիւն կը դնեն մեր վրայ մտածելու, թէ՛ գուք ո՛չ միայն չարաչար դործածած էք մեր ընկերական վստահութիւնը, այլ եւ՝ ինչպէս իրողութիւններն անվիճելիօրէն մեզ կը համոզեն՝ գուք կուսակցութեան դոյքերն ու տունը անձնական սեփականութեան պէս կը նկատէք եւ ուրեմն՝ այդ դոյքերը կուսակցութեան շահերուն պահանջած ապահովութեան մէջ չեն գտնուիր եւ եմթակայ են անհատական կամայականութեանը եւ քանակաւորութեանը .

« Իրաց այս վիճակին մէջ կը պահանջենք որ

« 1 Պր. Համբարձում Արղումանեան անմիջապէս կուսակցութեան տունէն դուրս ելլէ ընտանեօք եւ տունն ու կուսակցութեան բոլոր գոյքերը հաւասարապէս քե՛զմէն եւ քե՛զմէն հարաւորութեան ճակ դրուիլն :

« 2. Եթէ պր. Համբարձում Արղումանեան նկատումներ ունի կուսակցութեան տունը բնակելու՝ հակառակ մեր հաւանութեան, անմիջապէս նոր տեղ մը վարձուի՝ ուր փոխադրուին կուսակցութեան բոլոր գոյքերը եւ ուր մենք ու դուք՝ հաւասար իրաւունքներով անսցուիմք, եւ սրունքը յիստերիան զոց միւսը ո՛չ մեր, ո՛չ ալ ձեր առջեւ :

« Հնչակեան կուսակցութեան կեդր. վարչութեան ուղղութեամբ ամէն տեսակ թղթակցութիւններ, ծրարներ եւ դրամներ կը հասնին միեւնոյն տունը, որուն դռները դուք կը փակէք մեր առջեւ, սակայն ձեր երեքէն ո՛ր եւ է մէ ուն առջեւ ամեն վայրկեան քաց են տան ու պաշտօնաւայրին գոները :

« Դուք՝ առանց մեր գիտութեան՝ կը բռնաբար հասած նամակները, վար կը դնէք դրամները, որոնք՝ ըստ վարչութեան որոշումին՝ պարտաւոր էիք յանձնել կեդր. վարչութեան գանձապետին :

« Ասոնք ապօրինութիւններ են, որոնց դէմ ժամանակին մեր բրած բողոքները ցարդ արգիւնք մը չունենալուն՝ այսօր գրաւորապէս պարտք կը զգանք կրկնել մեր պահանջներն ու բողոքներն :

« Ու անգամ մըն ալ կը կրկնենք, թէ՛

« Այն օրը, ուր ապօրինութիւնները կը դադարեցնէք, մեր վերոյշիջեալ անձեռնմխելի իրաւունքները յարգել կը փութաք, այն օրը, որ կեդր. վարչութեան հասած դրամները գանձապետին կը յանձնէք, այն օրը իրաւունք կ'ունենաք գանձապետին կը յանձնէք, գանձապետին ձեռքով : Կենսաբ. օտանալ ձեր « սոցիալիստներ » անդամներ » (Ատորագրութիւնք)

Ստեղծ այն շնական գրութեամբ որով այս մարդիկը կըրցան նո՛յն իսկ իրենց ստորագրութեան տակ գրուած որոշումներն անգիտանալ կեղծել, այն գիւրութեամբ որով ձեւեղիս նազարէկեանի մը մասին թէ՛ բերանացի եւ թէ՛ գրաւոր իրենց բոլոր խոստումները կըրցան ուրանալ :

Այն չըլլալիք լրբութեամբ, որով մինչեւ վերջերս հրապարակաւ ալ կը ստեն ամենուն ծանօթ զէպքերն ուրանալով, եւ իրենց երեւակայութեան բոլոր զառանցանքներն իբր իրողութիւն հոչակելով,

Ստեղծ, զրպարտելու այդ միեւնոյն անհաւատալի եւ անվիճելի դիւրութեամբ, այդ պարոնները փոխանակ մեր այնքան արգար պահանջներուն գոհացում տալու, փութացին մեզ պատասխանել այլանդակ նամակով մը, ուր կը ճգնին կարծես մեզի դարձնել այն բոլոր ամբաստանութիւնները, զորս իրենց ներկայացուցած էինք՝ ճիշդ՝ ինչպէս այսօր՝ այնքան ջախջախիչ փաստերով իրենց դաւադրութեանց ու խարերայութեանց մէջ բռնուած ըլլալով հանդերձ, ինքզինքնին արդարացիւր միակ միջոցը գտած ըլլալ կը կարծեն՝ մեզի վերագրել փորձելով երեւակայալական գաւազրութիւններ՝ առանց սակայն մէկ հատիկ փաստ մը կարենալ մէջտեղ դնելու .

— Հնչակեան կուսակցութիւնը կործանելու համար միացեր են . . .

— Դաշնակցութիւնն ալ կործանել ծրագրեր են (1) . . .

— Փա՛ստ ունինք, 7 տարուան պատմութիւն, մատենաարձանագրութիւններ :

Ու դեռ ինչե՛ր : Ո՞վ գրեմէ, ո՞վ կրնայ գրտնալ այդ մարդոց ախտաւոր երեւակայութեան չափը :

(1) Դրօշակեանները՝ որ առանց խղճամիտ քննութիւն մը կատարելու օգտուելու ուղեցին Սրբումանեանց եւ ընկերութեան յարուցած սքանտալէն, որ նոյնիսկ անոնց հետ ձեռք ձեռքի տուած մեզի զէմ զգուելի պայքարի մը ելան այնպիսի օրերու մէջ, ուր ո՛չ միայն ո եւ է անկեղծ յեղափոխական՝ այլ նոյն իսկ ո՛ր եւ է անկեղծ յեղափոխական զաւազլրներուն՝ ինչպէս բոլորտ շունեները այդպէսով ունեցան ընթացք մը ո՛չ միայն անամօթ ու անխիղճ, այլ եւ՝ անխելք, որովհետեւ այդ Սրբումանեանցները, որոնց հետ կ'եղբայրանային, իրենց յիսերիմ թշնամիներն էին ներքնապէս, թէպէտեւ այդ միջոցին բարեկամ կը ձեւանային արտաքուստ : Դրօշակեանութիւնը կործանելու երեւակայական ձգտումներ մեզի հրապարակաւ վերագրելով, Դրօշակեաններուն աջակցութիւնը մուրալով հանդերձ, ահաւասիկ ինչ որ կը գրէր իրենցմէ մին. Հ. Սրբումանեանց՝

Այդ պարոնները՝ ստեղծ նոյն հրէշային սովորութեամբ՝ մեզի ուղղած իրենց վերոյիշեալ պատասխանադրին մէջ, կը յանդգնին զրպարտել,

Թէ՛ մենք կուսակցութեան գրամները կը մտխնք ըստ հաճոյց,

Թէ՛ առաջին անգամ Ամերիկայէն զրկուած 61 ոսկին յատկացուցեր ենք վերակազմեալ հնչակեան կուսակցութեան պարտքերուն եւ այդ պատճառով գրամ չենք տուեր Սազաթիէլ Սագունիին .

Թէ՛ մեր զեղծումները ծածկելու համար գանձարանի հաշիւները չենք ներկայացներ, եւն, եւն :

Եւ սակայն՝ ինչպէս հաշիւները մէջտեղն են ու կը վկայեն՝ այդ դրամը անբողջ յասկացուած է միակիցն Ախացեալ Հնչակեան կուսակցութեան պէտքերուն եւ մինչեւ մեր եւ իրենց միջեւ խղուամը, կեդր. վարչութեան հասած բոլոր գումարներուն հաշիւը կանոնաւորապէս, ամենայն մանրամասնութեամբ, տեղն ի տեղը ներկայացուած է ժամանակին թէ՛ իրենց եւ թէ՛ զրամը զրկող մասնաճիւղերուն :

Այս մարդոց վրայ այս բոլոր գաւազրութիւնները, խարտախութիւնները ու բացարձակ ստախօսութիւնները անհերքելի կերպով ապացուցանել վերջ, մեզի համար այլեւս ոճիր մը նկատեցինք աւելի երկար համբերել եւ թոյլ տալ որ քանի մը գոե՛րիկ խարերաներ դեռ եւս չարուեակե՛ն իրենց քանդումի պիղծ գերը, եւ ուստի՝ 1902 Նոյեմբեր 23

մանեանց՝ Ամերիկայի Հնչ. նահանգ վարչութեան ուղղուած իր 1902 Նոյեմբեր 7 թուակիր նամակին մէջ, որուն բնագիրը մեր մօտ կը մնայ .

- « Այո՛, Ամերիկայի մեր ամեն ստիար կողմն է՝ գրել եմ,
- » որովհետեւ նախ այդտեղ ունենք մեր ամենավատագուոր
- » ախոյեանը, Դաշնակցութիւնը, որ գիշեր ցերեկ իր բանն
- » ու գործն է արել նոր միացած ընկերներին սկար կողմից
- » օգտուելով՝ երկպառակութեան որոմը ցանկ մեր շարքե-
- » ըում, երկպառակութիւն որից ա՛յնքան օգտուեցան անց-
- » ետում, երկու հատուածների մէջ կայացած միութիւնը
- » անսպասելի երեւոյթ էր նրանց համար, եւ զորա համար
- » էլ նրանք իրենց բոլոր ուշադրութիւնը կեդրոնացրել են
- » Ամերիկայում, երկպառակութեան կրօնական երկրում,
- » զլորել անհամաձայնութեան «ոսկի խնձոր»ը :

Թուակիր ներքին շրջաբերականով մը Հնչակեան կուսակցութեան արտաքսեցիք այդ Համբարձում Արղումանեանցը, Սագունի Սաղաթիէն ու Տաշիրեանը՝ յայտարարով միեւնոյն ատեն, թէ՛

» Մենք դաւադիրներն ու անոնց մեղսակիցներն արտաքսելով՝ Հնչակեան միութիւնը մազի շափ խախտած չենք նկատեր : Ընդհակառակը :

Թիծաղելին այն է որ 1902 նոյեմբերին մեր կողմէ արտաքսուած այդ սրիկաները՝ ամիրներ յետոյ, լրբութիւնն ունեցան իբր է՛ մեղ իրենց կողմէ արտաքսուած ցոյց տալու հայհասարակութեան :

Ձիրենք արտաքսելնէս վերջն է որ աւելի քան երեք խելայեղօրէն փորձեցին սուտին ու զրպարտութեան ապաւինիլ իրենց ապաստանարան ընտրելով քանի մը Դրօշակեան կիսապաշտօնական) լրագիրները, որոնց գոյութեան իրաւունքը կ'արդարանայ՝ զրպարտութեան, ատելութեան ու վատութեան նուիրուած ըլլալու իրենց միակ գերազանց յատկութեամբ :

Դաւադիրներու եւ զրպարտիչներու այս յանկարծական եղբայրակցութիւնը չի կրնար մեզ վրդովել : Այդ արժանապայել մեղսակցութեան շարժառիթն ալ ի վեր հանելու պէտք չենք զգար : Չարիպանց ակներբւ է ինքնին :

Դաւադիրները՝ բաւական շեկեղով իրենց այս բոլոր անարգութիւնները՝ դեռ քանի մը ամիս առաջ ձեռնարկեցին «Հնչակ»ին համար մեզի դէմ դատ բանալ, իրենց ապականուած հոգիին ամբողջ պէգայի փտութիւնը պարզելու համար նաեւ անգլիական դատարաններուն առջեւ :

Այս առթիւ Ամերիկայէն, կարապետ Մարտիրոսեան անունով խարդախ ու անբանացած մարդակերպ մը իր լըզը ճուղկ հոգիին գարշահոտ խաւերուն մէջէն տեսնելով մարդերն ու իրերը, Լոնտոն, «Հնչակ»ի սեփականատիրութեան թուղթերը պատրաստող փաստաբանին ուղղած է անգղիերէն նամակ մը, զոր միայն իրեն պէս ամենագոռնիկ ու բախտախնդիր հացկատակ մը եւ իր ա՛յնքան արժանաւոր Սագունի ընկե ներք պիտի կրնային այդպէս ստորագրել ուրացած ըլլալով պատուոյ եւ պարկեշտութեան ամէն զգացում :

Այդ նամակին բառացի թարգմանութիւնը հետեւեալն է.

« Սիրելի պարոն,

» « Կը ցաւիմ որ ստիպուած եմ այս ձանձրոյթը տալ  
» ձեզի, բայց վստահ եմ որ Հայաստանի մէջ մեր խեղճ  
» ժողովրդին արդարութիւն ըրած ըլլալու համար, ներօ-  
» ղամիս պիտի ըլլաք եւ պիտի ներէք նաեւ մեր լեզուի  
» բոլոր սխալներուն :

» « Անշուշտ մինչեւ հիմա տեղեկացած էք, թէ մենք մի-  
» եւնոյն դժուարութեան մէջ ենք ձեր քաղաքի մէջ մեր  
» «Հնչակ» թերթի մասին, որուն մէջ ես ալ սեփականու-  
» թեան բաժին մը ունիմ եւ որուն համար անկարող բլ-  
» լալով Լոնտոն գալ, իմ ընկեր սեփականատիրոջս Ս.Սա-  
» դունիի կը զրկեմ փոխանորդութեան թուղթ մը, գոր-  
» պիտի ներկայացնէ ձեզ, բայց կ'ուզեմ ես ալ գրել ձեզ  
» այդ թերթի մասին յուսալով որ կրնայ օգտակար ըլլալ  
» ձեզի :

» Շատ մը տարիներ առաջ մեր հայերը զգացին թէ  
» այլեւս չէին կրնար տանիլ թուրքերուն հարստահարու-  
» թիւնը փոքր Ասիոյ մէջ եւ ուստի, անոնք, դէժ այս  
» Հայերէն ոմանք, կալմակերպեցին գաղտնի ընկերու-  
» թիւն մը «Հնչակեան կուսակցութիւն» կոչուած : Թուր-  
» քիոյ պետութիւնը կըցածը ըրաւ որ այդ կուսակցու-  
» թիւնը չյառաջանայ, բայց չյաջողեցաւ : Որքան Սուլ-  
» թանը ձերբակալեց, սպաննեց, այնքան աւելի անոնք ա-  
» ճեցան, ու տարածեցին իրենց ճիւղերը ամբողջ Հայաս-  
» տանի եւ եւրոպայի մէջ եւ իրենց կեդրոնաւայրը, Լոն-  
» տոն : Թուրքերը յուսահատեցան, անոնք տեսան որ այս  
» Հայերը չպիտի տանին իրենց ինչպէս եղած են շատ մը տարի-  
» չպիտի միան գերիներ ինչպէս եղած են շատ մը տարի-  
» ներ : այսպէս անոնք աւելի յուսահատեցան եւ սկսան  
» ամբողջական ջարդեր կրնար հրահրել ցնցեց, եթէ Անգղիա  
» ամբողջ քաղաքակիրթ աշխարհը ցնցեց, եթէ Անգղիա  
» չըլլար հայ ցեղը բնաջինջ եղած պիտի ըլլար, նոյնիսկ  
» այս սոսկալ ջարդը չկրցաւ սպաննել կուսակցութիւնն  
» եւ իր գործը, Ընկիւն մէկ բան կը մնար Թուրքիոյ, այն  
» էր գաղտնի խելացի ու գաստարակուած մարդ մը Հայե-  
» րուն մէջէն, որպէս զի այդ անձը, թուրք սուլթանի

» խաֆիէն ըլլալով ծախու առնէ կուսակցութիւնը : Այս  
 » մարդը , Արփիար Արփիարեան անուանով , յանձն առաւ  
 » մասնել իր խեղճ դժբաղդ հայրենիքը , եւ նոյն իսկ իր  
 » կուսակցութիւնը : Այս մարդը Սուլթանին ոսկիներով  
 » գրգռեց լեցուցած , Լոնտոն , կեդրոնավայրը եկաւ եւ  
 » ինքզինքը իր կուսակցութեան վարիչը հռչակ 'ց : Շատ մը  
 » գժուարութիւններէ վերջ , սկսաւ թերթ մը հրատարակել  
 » մերինին նման «Հնչակ» անունով : Մենք ստիպուեցանք  
 » գատ բանալ իր դէմ ձեր գատարաններուն մէջ , Լոնտոն ,  
 » ինչ որ կարծեմ ծանօթ է ձեզի արդէն : Դատարանները  
 » զայն յանցաւոր գտան եւ արգիլեցին զինքը այդ կեղծ  
 » թերթը հրատարակելէ եւ այսպէս անիկա արտաքսուեցաւ  
 » մեր կուսակցութեանէն մի անգամ ընդմիջտ . բայց դժբախ-  
 » տարաբ այս նոյն մարդը իր մէկ քանի հետեւողներն ունէր  
 » որոնք աշխատած էին իր հետ : Եւ կար տարիներ անոնք  
 » այդ մարդուն գործիքը եղան , մինչեւ անցեալ տարի երբ  
 » անոնք ալ անոր ճամբիտ գոյնը տեսան եւ իրենց կուսակ-  
 » ցութիւնէն արտաքսեցին : Այդ մարդը արտաքսելէ վերջ ,  
 » այս պղտիկ խումբը որ ինքզինքնուն կուսակցութիւն ա-  
 » նունը կուտային մեզի զիմեցին խնդրելով որ իրենք ի-  
 » ղենց մէջէն արտաքսած են խաֆիէն կամ խաֆիէները եւ  
 » ուզեցին մէկ մարմին ըլլալ մեզ հետ , եւ գործել ձեռք  
 » ձեռքի տուած իբրեւ մէկ կուսակցութիւն : Մենք ուրա-  
 » խութիւնով ընդունեցինք զիրենք տալով անոնց մեր սըր-  
 » տերն ու ձեռքերը եւ զանոնք քաջալերելու համար ի-  
 » ղենցմէ երկուքը ձեր քաղաքին մէջ (Լոնտոն) հրատարա-  
 » կուող մեր թերթին սեփականատիրութեան մէջ առինք ,  
 » պայմանաւ որ անոնք հնազանդին միացեալ կուսակցու-  
 » թեան համար նոր խմբագրուած եւ ստորագրուած օրէնք-  
 » ներուն եւ սահմանադրութեան : Անոնք խոստացան այդ-  
 » պէս ընել , եւ ժամանակ մը ըրին ալ . բայց դժբախտա-  
 » յար մենք նորէն սխալ մը գործած էինք վստահութիւն  
 » գրած ըլլալով անոնց մէջ , քանի որ այս երկու մարդիկը  
 » զորս մենք մեր թերթին սեփականութեան մէջ առինք ,  
 » տեսուեցաւ որ ուրիշ բան չէին , բայց եթէ գործիքները  
 » նոյն այն մարդուն , Արփիար Արփիարեանի , Սուլթանի  
 » խաֆիէին : Այս բանին չէինք կրնար այլեւս համբերել :  
 » Բայց մենք պիտի պահանջենք մեր թերթին իրաւունքնե-  
 » րը եւ սեփականութիւնը , ինչ որ ալ պատահի եւ ինչ որ

» ալ ըլլան բոլոր ծախքերը : Ի՛նչեւ մենք աղքատ ենք ,  
 » կարծեմ կարող պիտի ըլլանք ծախքը տանիլ եւ այս բանի  
 » մէջ կը յուսանք որ դուք ձեր կրցածը պիտի ընէք , եւ  
 » միեւնոյն ժամանակ պաշտպանէք մեզ ձեր դատարաննե-  
 » րուն մէջ : Այս պարագան աւելի մանրամասնօրէն պիտի  
 » բացատրուի իմ բարեկամիս կողմէն որ ինծի հետ սեփա-  
 » կանատէր է թերթին : Ես կատարեալ վստահութիւն ու-  
 » նիմ իր վրայ , ինչպէս որ իր անունին զրկած իմ փոխա-  
 » նորագործս պիտի տեսնէք :»

1903 յունուար 27ին , դաւաղիրները դատի կը հրաւի-  
 ըէին մեզ : Ստիպուեցանք իբր ամբաստանեալ արձանագրուել  
 դատաւորին մօտ : Երկու կողմի փաստաբաններ , նշանակուած  
 էին ու կը սպասէինք գատավարութեան կոչնագրին , երբ  
 ամիս մը վերջ , 1903 փետրուար 27ին , մեր փաստաբանն հա-  
 ղորդեց մեզ դաւաղիրներու փաստաբանին յայտարարութիւնը  
 թէ գատավարութիւն տեղի պիտի չունենայ :

Ու այս բոլոր խաղ ութեանց անորակելի հեղինակներն  
 են որ կրնան կոր գրել , թէ մենք ուզած ենք զբաղեցնել  
 զիրենք մեզմով . բայց իրենք՝ երեւակայական «Xի կէտի»  
 գործունէութեան պիտի յատկացնեն իրենց գումարները . . .

Սաղաթիէլ Սագունի եւ իր ընկերները մեզի դէմ այս-  
 պէս գատ բանալէ վերջ , խարդախութիւնն ու խարբա-  
 կէս գատ բանալէ վերջ , խարդախութիւնն ու խարբա-  
 յու թիւնը կ'ունենան իրենց «հարազատ»ներուն զրելու եւ  
 հաւատացնելու , թէ մենք ենք որ իրենց դէմ գատի դիմած  
 ենք , թէ այդ նպատակին համար անագին գումարներ զըր-  
 կուած են մեզի Ամերիկայէն :

Սաղաթիէլ Սագունի , Արդումանեանց եւ Տաշիրեան այս  
 խաչագողի յատուկ նենգութեան կը դիմեն՝ մեր կողմէն ե-  
 իւակայական դատավարութեան խնդիր կը ստեղծեն ու  
 դրամ կը մուրան , ինչպէս յատուկօրէն կը յայտնուի Պուր-  
 կազի հին հնչակեան քանի մը տխմարներու կողմէն , պաշ-  
 տօնապէս , Ֆիլիպպէի իրենց մեղսակիցներուն ուղղուած  
 հետեւեալ նամակէն , որուն բնագիրն ալ նոյնպէս մեր քով  
 կը գտնուի :

« Հնչ. Յեզ. Կուսակցութեան

» Պուրկազի մասնաճիւղ

» Պուրկազ 13/26 յունուար, 1903

Parti Révolutionnaire Arménien.

« Hentchakiste »

» Comité de Bourgas

» N. 83

Ֆիլիպպոպոլի հնչ. մասնաճիւղին

« Սիրելի բնակիչներ,

« Ստացանք ձեր յունուար 9 թուակրեալ նամակըն :

- » որուն կը փութանք պատասխանել : Երկար բարակ բա-
- » ցատք էք մեր նամակի հարցերին, զորս մենք առաջուց
- » աչքի առաջ ունեցեր ենք. այդ մասին այլևս երկար գրել
- » չենք ուզեր. միայն սա կը յանձնարարենք ձեզ, որ այս
- » նամակը ստանալուդ պէս, ինչպէս նաև մեր նախորդ
- » նամակը՝ կամ վա էք եւ կամ ապահով տեղ պահէք, հա-
- » կառակ պարագայները խուզարկութիւններ լինին մեր
- » այս նամակները ձեռք չ'անցնին : Միեւնոյն ժամանակին
- » մեր նամակներն այդ պարունակութիւնները որ իմացել էք
- » պէտք է պահեք ամենայն գաղտնապահութեամբ, իսկ ե-
- » թէ մի խոտք — մի բան ձեզանից գատ մի այլը հասկա-
- » նայ. նոյն միջոցին լաւ Գիտցած լինէք որ մեկին տեղ
- » (10) քսուր զոհեր կ'ունենաք :

- » Այսօր կեղոնից մեզ հասաւ՝ երկու հատոր Երջաբերա-
- » կաններ : Դուք եւս ստացել էք թէ ո՛չ : Թ թիւր կը խօսէր
- » Հմայեակի կուշարդեանի արած խարդախութիւնների մասին
- » որը ահագին գաւեր լարած է կուսակցութեանս դէմ : Իսկ
- » եւ Բ թիւր կը բազատրէ կուսակցութեանս սպառնա-
- » ցող վտանգների մասին : Ինչպէս մենք մեր նախորդ թիւ
- » նամակաւ հասկացրինք ձեզ թէ Ամեր. Նահանգ. վարչու-
- » քիւնից Լոնտոն հասուցել են մի գումար ահագին դրամի.
- » այժմ եւ տեղեկացանք այդ Երջաբերականներից որ վեր-
- » ջին անգամով միասին Լոնտոն հասեր է 250 անգղ. ոսկի .
- » « Հնչակի դասակարգեան համար . . . Մերիկներն էլ ստիպ-
- » մամբ հարկադրուել են դիմադրել, որ եւ գրել են մեր բո-
- » լոր մասնաճիւղերին, ուզել են դրամակաւ նպաստ :

Սպասելով ձեր որոշումներին . . . Ի դիմաց Պուր-

» կագու հնչ. մասնաճիւղին  
Ատենապետ Ատենադպիր  
Վանքաւ Սուրեն  
(Կնիք)

Անցողակի բռնք որ այս դատը, զոր իրենք բացին մեզի դէմ եւ որուն նախաձեռնութիւնը խաբեբայօրէն մեզի վերադրեցին, չկրցան ալ ի գլուխ հանել, ինչպէս արդէն ըսինք :

Վերեւ ստորագրուած նամակը երեւան կը հանէ սակայն բացի այս խաչադողական արարքէն՝ շատ աւելի ծանր խընդէր մը, եւ հոգ արդէն կը մտնենք այդ ճիւղերուն մեքե-նայութեանց եղեռնական շրջանին մէջ :

Այն զո՛ր, որուն կ'ախարհուի այդ նամակին մէջ, ողբացեալ Չիթճեանն է, որ նոյն միջոցին Պուրկազի կը գտնուէր եւ այդ նամակին թուականէն քիչ առաջ այդ նոյն ուրկազի մասնաճիւղին կողմէն սպառնական նամակ ընդունած էր՝ համաձայն այն թելագրութիւններուն, որով Լոնտոնի երեք հրէշները՝ իրենց Պուրկազիոյ նամախօնները կը հրաժարէին «բունցքի հարուածներով հալածել» Չիթճեանը :

Պուրկազիոյ մէջ չլալողած ոճիբը կողկատի մէջ կատարուեցաւ :

Այո՛, չբաւականանալով զրգարտութիւններու միջոցաւ մեր կարգ մը ընկերները մրօտելու ճիգերով, ու տեսնելով մանաւանդ որ այդ բոլոր ճիգերն ազարդեւն կը մնային, մասնաւոր իրենց առեւտրութիւնը տարին մընչեւ մարդասպանութիւն : Բայց Շահենի եւ Չիթճեանի պէս անդասուրթիւն : Բայց Շահենի եւ Չիթճեանի պէս անդասուրթիւն յեղափոխականներուն արիւնը մտնելու Սուրբանբասի յեղափոխականներուն արիւնը մտնելու Սուրբանբասի յեղափոխական ոճիբը կատարող Հայեր՝ իրենց վերջնական Համիտական ոճիբը կատարող Հայեր՝ իրենց վերջնական դատակնիքն է որ իրենց ձեռքովն արձակած կ'ըլլան :

Այս վայրկեանիս ամէն Հայ առանց կուսակցական խտրութեան, Շահենի եւ Չիթճեանի մա՛ր կ'ողբայ եւ մարդասպանի խարանը կը կոխէ անոնց մա՛նուան զրգիչն ելող Արդումանեանց, Սագունի Սաղաթիէլ եւ Սիմէոն Հովուանց (Տաշիրեան) կողմած հրէշներուն ճակատին :

Դրօշակեաններն իսկ որ դեռ երէկ այդ ճիւղերուն աջակից հանդիսացան, եւ առով անոնց այս ոճիբներուն մեղաւորութեան բաժին մը ստանձնած եղան, այժմ այլևս ինքզինքնին բռնադատուած կը զգան այդ ճիւղերը դուրս փխտելու իրենց ժամանակաւոր եւ նպատակաւոր համակրու-



թենէն ու կը փութան «քրդական թայֆայականութեամբ  
կուրացած զազան ոճրագործի» տիտղոսը տալ անոնց :

Հնչակեան կուսակցութեան ընդհանուր ժողովը, որ  
պիտի գումարուի քիչ օրէն, պիտի գիտնայ անշուշտ միջոց-  
ներ ձեռք առնել այդ զազանները սանձահարկու համար :  
Բայց արդէն իսկ Հայութեան խղճմտանքը անոնց մասին  
իր վճիռը տուած է : Ո՛հ է Հայու համար, որ սիրտ ունի,  
այդ աւազակները այլեւս մէկ անուն մը միայն ունին :  
— Կ Ա Յ Է՛Ն :

ԿԵԴՐ . ՎԱՐՉՈՒԹԻԻՆ  
ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

Լոնսոն  
Յուլիս 1903



« Ազգային գրադարան



NL0194491

